



175

3K13

F-76





7 NOV 20



ՏՐ. ԵՆԳԵԼԸ

“ԲՆՈՒԹՅԱՆ
ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻՑԻՑ,”

(Պերուժության հիմքեալիքա)

Ֆ-76
3K13

ՊՍՀՐԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԻՐՏԱԿԱՆ • 1939

ՀԱՄ Կ (Բ) Կ ԿԵՆՏՐԱԿԱՆ ԿՈՅ ՄԱՐԴԱՆ—ԵՎԳԵԼԻԱՆ—ԼԵԳԵՆԵՎ ԲՌՈՍՏԻՑԻ

3K13

F-76

Ար.

ՖԲ. ԵՆԳԵԼԸ

“ԲՆՈՒԹՅԱՆ
ԴԻԱԼԵԿՏԻԿԱՅԻՑԻՑ”

(Ներածություն: Դիալեկտիկա)

ԳԵՏԳՐԱԾ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939

ՄԱՐՔՍԻ—ԵՆԳԵԼՍԻ—ԼԵՆԻՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՑ

Ներկա հրատարակության մեջ մացված են 3. Ենդելսի «Բնության գիտեկության» աշխատավորությունից յերկու գլուխ՝ «Երածություն» և «Դիմուկեկության»։ Դրանք «Բնության դիմուկեկությայի» յերկու կարեռագործույն բաղկացուցիչ մասերն են, զորոնք աչքի ընկնող հետաքրքրություն են ներկայացնում ընթերցողների ամենալայն շրջանի համար, մանավանդ, զոր զբանք մեջբերվում են «Համեկ(բ)կ պատմության համառայ դասընթացում»՝ գիտեկությական և պատմական մատերիալիզմի հիմունքները շարպընիս :

«Ներածությունը», վոր Ենդելսը գրել է 1875 կամ 1876 թ., բաժանվում է յերկու մասի: Առաջին մասում Ենդելսը տալիս է բնագիտության՝ Կոպերնիկոսից մինչև Գարդին՝ ունեցած զարգացման փայլուն արվագիծը, ցույց տալով, թե ինչպես բնության մետաֆիզիկ հայեցողությունը, վոր բնորոշ եր XIX-ի XVIII դարերի համար, քայլ առ քայլ պայմում և ներսից իր հետ բնագիտաության ներքին զարգացմանը և հարկադրյում է իր տեղը զիջել բնության նոր, դիալեկտիկական լմբանմանը: Յերկրորդ մասում արվում է բնության և մարդկային հասարակության պատմության վո՛չպակաս փայլուն արվագիծը՝ յատերիալիստական դիալեկտիկայի տեսակետով, վոր Հենվում է զիտության նորագույն բոլոր նվաճումների վրա և նոր ուղիներ ենույց տալիս դիտության բոլոր բնագավառներում: Այլ խորագույն ասած, այսուհեղ արվում է այն հավերժական շրջապատճյանի ընդհանուր պատճերը, վորի մեջ շարժվում է մատերիան, ծավալելով իր շարժման ձևերի ամրացն բազմազան չարսառությունը՝ սկսած հասարակ մեխանիկական տեղափոխումից մինչև մարդու կյանքն ու միտքը:

«Դիալեկտիկա» Փրազմենտն Ենգելսը դրել է 1879 թ.: Այս

Ф. ЭНГЕЛЬС
ИЗ «ДИАЛЕКТИКИ ПРИРОДЫ»
(ВВЕДЕНИЕ. ДИАЛЕКТИКА)
Армгиз—Издательство полит. литературы
Ереван, 1939

Հոգվածը անավարտ մնաց : Այսուեղ Ենդելսը տալիս ե դիալեկտիկական որենքների ընդհանուր բնությագիրը և ավելի մանրամասն կանգ և առնում իր թվարկած որենքներից միայն առաջինի վրա , այս ե՝ քանակը վորակի անցնելու որենքի վրա : «Բնության դիալեկտիկայի» նախկին հրատարակություններում այս Հոգվածը տրվել և «Դիալեկտիկայի, վորակն զիտության, ընդհանուր բնույթը» խորագրով : Ենդելսն այսպէսի խորագիր չի դրել : Այս Հոգվածի ձեռադրի առաջին եջի վրա Ենդելսը վորակն խորագիր դրել և «Դիալեկտիկա» բառը, իսկ ձեռադրի 5-րդ և 9-րդ եջերի վրա , այսինքն 2-րդ և 3-րդ թերթի սկզբում «Դիալեկտիկական որենքներ» բառերը, վոր բնորոշում ևն տվյալ Փրազմենտի հիմնական բովանդակությունը : Իսկ ինչ վերաբերում է «Դիալեկտիկայի, վորակն զիտության, ընդհանուր բնույթը» խորագրին, ապա դա «Բնության դիալեկտիկայի» նախկին հրատարակիչները կամացականորեն կազմել են գերմաներեն բնագրի այն առաջին հինդ բառից, վորոնցով սկսվում ե այս Հոգվածը :

«Բնության դիալեկտիկայի» առաջին յերկու գլուխների ներկա հրատարակությունը քաղվածք և ամբողջ «Բնության դիալեկտիկայի» նոր հրատարակությունից, վոր պատրաստում և Մարքսի—Ենդելսի—Լենինի Խնտիփառութը : Դա զգալի չափով տարբերվում ե այս յերկի նախորդ բոլոր հրատարակություններից, վորոնք տառապում են մի ամբողջ շարք խոշորագույն թերություններով ինչպես գերմանական բնագրեր վերծանման գծով . նույնպես ել նյութի դասալորման և մատուցման գծով , այլև, հատկապես, ռուսերենի թարգմանելու գծով :

«Բնության դիալեկտիկայի» նոր հրատարակության մեջ թարգմանությունն արված ե հիմնականում 1935 թվի գերմաներեն հրատարակությունից, ըստվորում այս հրատարակության բնագրը նորից և բաղդատված Ենդելսի ձեռադրի Փոտոպատճենների հետ : Այս բաղդատումը գերմաներեն բնագրի նախկին վերծանման մեջ մի շարք եյական սխալներ բերեց : «Բնության դիալեկտիկայի» առաջին յերկու գլուխներում գերմաներեն բնագրի առավել կարեար ուղղումները հետեւյաներն են .

1) եջ 486 (1935 թ. գերմ. հրատարակության) ներքեւից 4-րդ տողը՝ փոխարեն «den besten Boden» պետք ե կարդալ «den Boden» :

2) եջ 494, տող 1՝ փոխարեն «Pflanzen- und Tierwelt» պետք ե կարդալ «Pflanzen und Tiere» :

3) եջ 498, տող 27, փոխարեն «die des Leben selbst, und naturbewusster Wesen» պետք ե կարդալ «die des Leben selbst- und

naturbewusster Wesen» (այսինքն՝ ստորակետի փոխարեն դեֆին) :

Ինչ վերաբերում ե Ենդելսյան բնագրի մատուցման, ապա նոր հրատարակության մեջ բաց են թողնված այն բառերն ու Փրազմերը, վորոնք Ենդելսի մոտ գրելու պրոցեսում ջնջված են վորակներեն չրավարարողներ : «Բնության դիալեկտիկայի» ուսուական հրատարակությունների մեծ մասում այս տեղերը տրվում եյին բուն տեքստում անկյունավակագծերով, վոր զգալի կերպով գժվարացնում եր ընթերցումը և խախտում եր տեքստի խմբագրության այն ներդաշնակությունը, վոր Ենդելսն ինքը լավագույնն եր համարում : Նոր հրատարակության մեջ Ենդելսի ջնջածներից տրվում են միայն այնպիսիները, վորոնք ամբողջ արգացներ են բոնում և ջնջված են վոչ թե միքանի, այլ միայն մեկ ուղղածիդ կամ թեք գծով ի նշան այն բանի, վոր այդ արգացներն այս կամ այն չափով Ենդելսն ոգտագործել ել իր մյուս աշխատություններում :

Ենդելսի ձեռադրի լուսանցքներում կան վոչ մեծ նշումներ, վոր արված են մատիտով և այդ պատճառով ել հաճախ շատ անպարզ կերպով են արտացոլվում Փոտո-պատճենների վրա : Յերբեմն այդ նշումներն այն մտքերի սկզբնական նախնական ուրիշիքն են պարունակում, վորոնք հետազայում Ենդելսի մոտ զարգացվում են բուն, արդեն իսկ վոչ թե մատիտով, այլ թանաքով գրված, տեքստում : Մատիտով արված այսպիսի նշումները նոր հրատարակության մեջ չեն տրվում, քանի վոր դրանց բովանդակությունը արտահայտվում և հիմնական տեքստում և քանի վոր, բայց այդ, դրանց վերծանումը յերբեմն անհաղթահարելի գժվարությունների յի հանդիպում : Իսկ լուսանցքներում մատիտով արված այն նշումները, վորոնք չի զարդացնել Ենդելսն իր գատողությունների հետազալնությունը, բերվում են Եղանակի ծանոթագրություններում այն բոլոր գեպքերում, վորտեղ հնարավոր և յեղել դրանք վերծանել :

Գերմաներեն բնագրի բուն թարգմանության մեջ վերացված են նախորդ հրատարակությունների մի ամբողջ շարք սխալներն ու անձառնությունները : Այս տեղերում, վորտեղ Ենդելսն արգացների միջև արոհագծիկներ ե գրել, վորոնք դլիսի նոր հատվածին անցում են ցույց տալիս, այս ստորաբաժանումները վերատարված են նաև ռուսերեն թարգմանության մեջ :

Ենդելս հրատարակությունը տպագրության համար պատրաստել ե ընկ. Վ. Կ. Բրուշինսկին :

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ¹

Բնության արդի ուսումնասիրությունը՝ միակը, վորը տարավ դեպի գիտական, սիստեմատիկ, բազմակողմանի դարրացման, —հակառակ հների հանճարեղ բնափիլիսոփայական կուսումների և արաբների խիստ կարևոր, սակայն ցիրուցան ու մեծ ժամանքը ապարդյուն կորած հայտագործությունների, —բնության արդի ուսումնասիրությունը, ինչպես և ամբողջ նոր պատմությունը, իր թվականությունն սկսում է այն մեծ եպօփայից, վորին մենք գերմանացիներս՝ այն ժամանակ մեզ հասած ազգային գերախտության հետևանքով՝ անվանում ենք ոեֆորմացիա, Փրանսացիները՝ ոենեսանս, իսկ խտալացիները՝ չինկիլեչնաս²

1 «Բնության դիմելեսիկային» վերաբերող վեց հոդվածների այն ցանկի մեջ, զոր կաղմել ե նեղելու, այս «Ներածությունը» կոչում և «Հին ներծություն»։ Այս անունն, ըստ յերեսութին, բացատրվում է այն բանով, որ այս հոդվածը դրված եր ամենի վաղ, քան «Բնության դիմելեսիկայի» հինգ հոդվածները և «Անտի-Դյուրեխնովը»։ Նույն այս «Ներածության» տեքստի մեջ կա յերկու տեղ, զորոնք թույլ են տալիս վորոշել, թե յերբ ե դրված դա։ 19-րդ եղանակուն տում ե, թե «Քջիլը քառասուն տարի չկա, ինչ հայտագործված ե»։ Ցեթե նկատի ամենք, վոր 1858 թ. հուլիսի 14-ին Մարքսին ուղղած իր նամակում ենդելու 1836 թիվն ե ժամանակում, զորպես բջիջ հայտաբերման մոտավոր դատաւ, ապա այս թվին գումարելով 39 տարի («քառասուն տարի չկա»), կստանանք 1875 թ., վորպես «Ներածությունը» դրելու տարեթիվ։ Մյուս կողմից, 21-րդ եղանակում զրում ե, թե «դեռ մոռավորապես 10 տարի յե միայն, ինչ հայտնի յե դարձել, վոր սարսուկտուրայից բոլորին զորեկ սպիտակուցը կատարում է կյանքի բոլոր եյական Փունկցիաները», նկատի ունենալով, ամենայն հավանականությամբ, երնսոս չեկելի «Ուրգանիզմների ընդհանուր մորֆոլոգիան», վոր լույս ե տեսել 1866 թվին։ Այս դատային ավելացնելով 10 տարի, կստանանք 1876 թ.։ Այսպիսով պետք է հավաստի համարել, վոր «Ներածությունը» դրված ե 1875 թ. կամ 1876 թ.։ Այս «Ներածության» սկզբնական ուրվագիծը տրված ե Ցերկերի ժող.։ Հ. XIV, եջ 415—417։—Խմբ.։

2 Բառացի՝ հինգ հարյուրական տարիները, այսինքն՝ տասնեւեցերորդ դարը։—Խմբ.։

և վորի բովանդակությունը չի սպառվում այդ անուններից և վոչ մեկով։ Սա այն եպօփայան է, վոր սկսվում է ՀՎ դարի յերկրորդ կեսից։ Թագավորական իշխանությունը՝ Հենվելով քաղաքի բնակչների վրա՝ խորսակեց Փեողալական ազնվականության դորությունը և հաստատեց խոշոր՝ ըստ եյության ազգությունը վրա հիմնված՝ միապետություններ, վորոնցում զարգացան արդի յեկըրուական ազգություններն ու արդի բուրժուական հասարակություններ։ Յեկ մինչդեռ քաղաքի բնակչներն ու ազնվականությունը տակալիին շարունակում եյին ծեծկուացն իրար միջն, գերմանական գյուղացիական պատերազմը¹ մարդարեաբար մատնանիչ արավ ապագա գասակարգային կոփիները, վորովհետեւ այդ պատերազմում վոչ միայն գյուղացիներն եյին թատերաբեմ դուրս յեկել, —այդ արդեն իսկ բնավ նորություն չեր, —այլ նրանց հետեւից յերեացին արդի պրոլետարիատի նախակարասկետները կարմիր գրուշը ձեռներին և գույքի հանրայնության պահանջը չուրթերին։ Բյուզանդիայի անկումից փրկված ձեռադրերը, Հոռմի փլատակիներից հանված անտիկ հուշարձանները մի նոր աշխարհ բացին զարմացած Արևմուտքի առջեւ։ Կունական հին աշխարհը։ Նրա լուսավոր որբազների հանդեպ չքացան միջնադարի ուրվականները։ Իտալիան հասավ արիեստի չտեսնված բարդավագածնան, մի արվեստ, վոր կլասիկ հին զարի ցոլքն եր թվում, և վորին հետազայում չհաջողվեց այլիս հասնել։ Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում առաջացավ նոր գրականություն, արդի անդրանիկ գրականությունը։ Անգլիան և Խոպանիան չուտով այնուհետեւ ապրեցին իրենց կլասիկ գրական եպօփայան։ Վաղեմի Օրբիս տերրագում-ի² շրջանակները խորսակվեցին, յերկիրն իսկապես միայն նոր հայտագործվեց, և հիմք դրվեց հետազա համաշխարհային առևտորին ու արհեստից մանուֆակտուրային անցնելուն, վորն իր հերթին հանդիսացավ արդի խոշոր ինքուստրիայի յելակետը։ Խորսակվեց յեկեղեցու հոգեոր դիկատուրան։ Գերմանական ժողովությունների մեծ ժամանությունը կեն չպրտեց նրան և ընդունեց բոլորքականություն, այնինչ ուոմանական ժողովությունների մեջ՝ աբտուներից ժառանգած և նոր հայտագործված՝ հունական վիլիսուփայությունից սնունդ առած կինսուրախ աղատախո-

1 Գյուղացիական պատերազմը Գերմանիայում տեղի ունեցավ 1524—1525 թվականներին։—Խմբ.։

2 Orbis terrarum—այդպես եյին կոչում հին հռոմայցիք աշխարհը, յերկիրը։ Բառացի՝ յերկրների աշխարհ։—Խմբ.։

Հությունը հետզհետե արմատացավ, վորը հող պատրաստեց
XVIII դարի մատերիալիզմի համար:

Դա խոշորագույն պրոդրսոսիվ հեղաշրջումն եր, վոր մարդկությունը յերբեք ապրել է, մի եպոխա, վոր տիտանների կարիք ուներ և տիտաններ ել ծնեց—մտքի, կրքի և բնավորության ուժով, բազմակողմանիությամբ և դիտական պատրաստությամբ ոժտված տիտաններ: Այն մարդիկ, վոր արդի բուրժուազիայի տիրապետության հիմքը դրին, ամեն ինչ ելին, միայն թե վոչ բուրժուազիանը սահմանափակ: Ընդհակառակը, նրանք ավելի կամ պակաս չափով տարված ելին իսկապահ արկածախնդիրների այն ժամանակվա համար բնորոշ վոգով: Այն ժամանակ համարյա չկար մի ականավոր մարդ, վոր հեռավոր ճանապարհորդություններ կատարած չլիներ, չորս կամ հինգ լեզվի չտիրապետեր կամ միքանի ստեղծագործական բնադավառների մեջ չփայլեր: Եեռնարդո դա վիճին վո՛չ միայն խոչոր նկարիչ եր, այլև ականավոր մաթեմատիկոս, մեքենագետ և ճարտարապետ, վորին պարտական են Փիլիպիայի բարձագան ճյուղերն իրենց կարեռ հայտադրություններով: Ալբրեխտ Դյուրերը նկարիչ եր, վորագրիչ, քանդակագործ, ճարտարապետ և, բացի այդ, դասի Փորտիֆիկացիայի մի սիստեմ, վոր իր մեջ պարունակում եր վորոշ իդեաներ, վորոնք զգալի չափով ավելի ուշ նորից սդադործեցին Մոնտալմարերը և Փորտիֆիկացիայի մասին գերմանական նորագույն ուսմունքը: Մաքիավելին պետական գործիչ եր, պատմաբան, լանդաստեղծ ու, բացի դրանից, հիշատակության արժանի նոր ժամանակի առաջին ուսդամական գրողը: Լութերը մաքրեց վոչ միայն յեկեղեցու այլև գերմանական լեզվի ավագան ախոռը, ստեղծեց գերմանական արդի պրոլան և հորինեց հաղթանակի վատահությամբ լի այն խորալի բնադիրն ու յեղանակը, վորը դարձավ XVII դարի «Մարտելյողը»: Այն ժամանակվա հերոսները տակավին աշխատանքի բաժանման ստրուկներ չելին գարձել, վորի սահմանափակիչ միակողմանիություն ստեղծող աղջեցությունը մենք այդքան հաճախ նկատում ենք նրանց հետնորդների մոտ: Յեվ նրանց համար առանձնապես հատկանշականն այն ե, վոր նրանք զբեթե բոլորն ել իրենց ժամանակի յեռուղենի մեջ են ապրում, աշխատություն մասնակցում են պրակտիկ պայքարին, հարում են այս կամ այն կուսակցությանը և կովում՝ վոմանք խոսքով կամ դրչով, վոմանք սրով, վոմանք թե՛ մեկով և թե՛ մյուսով: Այստեղից ել բնավորության այն ուժն ու կորովը, վոր նրանց դարձնում ե ամբողջական մարդ: Կաբինետային գիտա-

կաններն այն ժամանակներում բացառություն ելին կազմում, նրանք յեղել են կամ յերկրորդ ու յերրորդ կարգի մարդեկի, կամ խռհեմ Փիլիպսերներ, վորոնք իրենց մատներն այլել չեն կամ նույնում:

Բնության ուսումնասիրությունն ել այն ժամանակ զարդանում եր ընդհանուր հեղափոխության պայմաններում և տողորված եր հեղափոխականությամբ: չե՞ վոր նա դեռովիտի նվաճերի դոյցության իրավունքը: Չեռք ձեռքի տված խոշոր իտալացիների հետ, վորոնցով սկսվում ե նոր փիլիսոփայության թվականությունը, բնության ուսումնասիրությունն ել ավեց իր մարտիրուները ինկլիպիցիայի խարույկներին ու բանտերին: Յեվ նշանակելին այն ե, վոր բողոքականները կաթոլիկներից ավելի առաջ ելին գնում բնության աղատ ուսումնասիրությունը հալածելու դործում: Կալվինն այրեց Սերվետին, յերբ սա ընդհաւող մոտեցավ արյան շրջանառությունը հայտագործելուն, և այն ել ստիպեց յերկու ժամ վողջ վողջ խորութել նրան: Ինկլիպիցիան գոնե բավականացավ նրանով, վոր ուղղակի այրեց Զորդանո Բրունոյին:

Հեղափոխական ակտը, վորով բնության ուսումնասիրությունն իր անկախությունը հռչակեց և կարծես թե կրկնեց պատիկոնդակի այրումը Լութերի ձեռքով, այն անմահ յերկի հրատարակությունն եր, վորով Կոպերնիկոսը—թեև յերկշոտությամբ և, այսպես ասած, մահվան մահճում—առաջինը ձեռնոց նետեց յեկեղեցու հեղինակությանը բնության հարցերում: Այդտեղից ե սկսում իր թվականությունը բնադիտության աղատակրումը թեռնոգիայից, թեև սրանց փոխադարձ առանձին հավակնությունների պարզաբանումը մինչեւ որս ել շարունակվում ե և շատերի գլխում այժմս ել գեռ հեռու յե ալաբամական լինելուց: Բայց թե այն ժամանակակից հոկայական քայլերով առաջ գնաց նաև գիտությունների զարգացումը, վորն ուժեղացավ, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, իր յելակետից՝ հեռավորության (ժամանակային) քառակուսու համեմատությամբ: Կարծես թե աշխարհին պետք եր ապացուցել, վոր այսուհետև որդանական մատերիայի գերագույն պրոդուկտի՝ մարդկային վոգու համար ուժունի շարժման մի որենք, վորը հակաղարձ և անորդանական նյութի շարժման որենքին:

Բնադիտության զարգացման առաջին ժամանակաշրջանի այժմ սկսվող գլխակոր աշխատանքը առկա նյութի հաղթարքումն ե: Բնադիտականների մեծ մասում պետք եր սկսել բուն այ-

բուրենից։ Հին դաըը ժամանակություն թողեց Եվլիլիկեսին ու Պաղոմեոսի արեգակնային սիստեմը։ արարները թողին թվակարդության տասնորդական սիստեմը, հանրահաշվի սկզբունքները, թվանշանների արդի տրանսկրիպցիան ու ալքիմիան։ քրիստոնեական միջնադարը՝ վոչինչ չթողեց։ Այս պարագաներում անխուսափելիորեն առաջին տեղը գրավեց տարրական բնագիտությունը, յերկրացին ու յերկնային մարմինների մեխանիկան ու բնագիտության հետ՝ վորածն նրանց սպասարկու՝ մաթեմատիկական մեթոդների հայտագործումն ու կատարելագործումը։ Այստեղ մեծ դործեր կատարվեցին։ Այս ժամանակաշրջանի վերջին, վոր հայտնի յե դարձել Նյուտոնի անոններով, մենք տեսնում ենք, վոր դիտության այս ճյուղերը վորոշ ամարտեն ստացել։ Հիմնական գծերով սահմանվեցին կարևորագույն մաթեմատիկական մեթոդները՝ վերլուծական յերկրաչափությունը՝ առավելապես չնորսիվ Դեկարտի, լոգարիֆմները՝ Նեպերի, գիտքերներական և ինտեգրալ հաշիվը՝ Լայբնիցի ու Յերես Նյուտոնի։ Նույնը կարելի յե տաել պիտի մարմինների մեխանիկայի մասին, վորի գլխավոր որենքները միանդամ ընդմիշտ պարզվեցին։ Վերջապես արեգակնային սիստեմի աստղաբաշխության ասպարեզում կեպվերը հայտագործեց մոլորակների շարժման որենքները, իսկ Նյուտոնն այդ ձևակերպեց մատերիայի շարժման ընդհանուր որենքների տեսակետից։ Բնագիտության մյուս ճյուղերն անդամ այս ժամանակուր ավարտից ել չատ հեռու եյին։ Գաղային ու հեղուկ մարմինների մեխանիկան ավելի զգալի չափով մշակվեց այս ժամանակաշրջանի վերջին միայն¹։ Բուն Փիզիկան դեռ չեր դուրս յեկել զարդացման ամենաառաջին, սկզբնական սահմաններից՝ բացառությունը ուղարկեալի, վորը բացառիկ նվաճումների հասալ աստղաբաշխության դորձնական պահանջմունքների չնորդիվ։ Քիմիան դեռ նոր եր ազտագրվել ալքիմիայից Փլոդիստոնյան թեորիայի միջոցով²։ Յերկրաբանությունը գեռ չեր դուրս յեկել հանքարանության սաղմնային ստաղիայից, ուստի և պալեոնտոլոգիան բուրություն անկարող եր գոյություն ունենալ։

¹ Լուսանցքում ենդիլը մատիսով նշել և. «Տորիէլին ալպիական լեռնային հեղուղների կարգայրուման առթիվ»։—Խմբ.։

² Քիմիայի մեջ XVII—XVIII դարերում իշխող թեորիան, ըստ վորի այրման և քիմիական պրոցեսները պայմանավորվում են մարմինների մեջ հասուն յութիքի ֆլոգիստոնի առկայությամբ։ XVIII դարի վերջում ապրող հոչակագործ քիմիկոս Լավուազյեի հետազոտություններն աղացնուցեցին թլուխատոնի թեորիայի անհիմն լինելը։—Խմբ.։

Եկրջապես, սիոլոգիայի բնագավառում գերազանցապես զբաղված եյին նրանով, վոր դեռ ժողովում և սկզբնական սիստեմի եյին բերում վիթխարի քանակությամբ նյութը՝ ինչպես բուսաբանական ու կենդանաբանական, նույնպես և անատոմիական ու մասնավորակես ֆիզիոլոգիական։ Դեռ խոսք անդամ լինել չեր կարող վո՛չ կենսաձևերը միմյանց հետ համեմատելու, վո՛չ նրանց աշխարհագրական տարածման, վո՛չ նրանց կիմայաբանական և այլ պայմանների ուսումնասիրության մասին։ Այստեղ միայն բուսաբանությունն ու կենդանաբանությունը լիննեյի չնորհիվ հասան վորոշ մոտավոր ավարտի։

Սակայն այն, վոր ուսումնասիրության յենթակա ժամանակաշրջանն առանձնապես բնորոշում ե, դա յուրօրինակ ընդհանուր աշխարհայցքի մշակումն ե, վորի կենտրոնը կազմում ե բնուրյան բացարձակ անփափության պատկերացումը։ Ըստ այս հայացքի բնությունը,—անկախ այն հանդամանքից, թե ինչպես ե նա առաջացել,—յերբ մի անդամ արդեն առկա յե, մնում ե միշտ անփոփոխ, քանի նա գոյություն ունի։ Մոլորակները և նրանց արբանյակները, մի անդամ արդեն շարժման մեջ դրվելով խորհրդագոր «նախահարվածի» կողմից, շարունակում եյին պատվել նրանց համար կանխաղծված ելիպսով հավիտյանս հավիտենից կամ մինչեւ բոլոր իրերի վախճանը։ Ասողերը հանդչում եյին հավերժ անշարժ իրենց տեղերում՝ այդ վիճակում իրար պահպանվել ատիկերական ձգողության» չնորհիվ։ Յերկիրը վազուց ի վեր կամ իր ստեղծվելու որից (նայած տեսակետին) շարունակ նույնն եր մնում։ Այժմյան «հինգ աշխարհամասերը» միշտ գոյություն եյին ունեցել, միշտ ունեցել եյին նույն լեռները, հովիտները և գետերը, նույն կլիման և նույն Փլորան և ֆառւնան, —յեթե նկատի չունենանք մարդկային ձեռքով կատարված փոփոխություններն ու տեղափոխությունները։ Բուսական ու կենդանական տեսակներն առմիշտ հաստատվել եյին իրենց ծագման ժամանակ, հավասարը միշտ սերել եր հավասարին, և լիննեյն արդեն մեծ զիջում արեց, ընդունելով, թե տեղ-տեղ տրամախաչման միջոցով թերես կարող եյին նոր տեսակներ առաջանալ։ Մարգկային պատմությանը հակառակ, վոր զարգանում ե ժամանակի մեջ, բնության պատմությանը տարածության մեջ ծավալում եր միայն վերագրվում։ Բնության մեջ ամեն փոփոխություն, ամեն զարգացում ժխտվում եր։ Բնագիտությունը, վոր սկզբում այնքան հեղափոխական եր, հանկարծ գեմ առավամբողջովին պահպանողական բնությանը, վորի մեջ ամեն ինչ

այժմ ել զեռ մնում ե նույնը, ինչ յեղել եր սկզբից ի վեր, և վորի մեջ մինչև աշխարհի վերջը կամ մշտնչնապես ամեն ինչ պիտի մնար նույնը, ինչ իսկզբանե յեղել եր:

Վարքան բարձրացել եր XVIII դարի առաջին կեսի բնագիտությունը հին հունականից իր իմացությունների ծավալով և նույնիսկ նյութի սխտեմատիզացիայով, սակայն այդ նյութի դաղափարական հաղթահարման, բնության ընդհանուր աշխարհայեցողության տեսակետից նույնքան նրանից ցածր եր: Աշխարհը հույն փիլիսոփաների համար եյապես յեղել է քառորդ ծագած, զարդացող, դոյցող մի բան: Քննավոր ժամանակաշրջանի բնագետների աչքում աշխարհը վոսկրացած, անփոփոխ, իսկ շատերի համար՝ միանդամից ստեղծված մի բան եր: Գիտությունը տակալին խորն ընկղմված եր թեոլոգիայի մեջ: Նա ամենուրեք վորոնում և գտնում ե՝ վորպես վերջին պատճառ՝ մի արտաքին հարված, վոր իրնե անբացարելի յե: Յեթե ձգողականությունը, վոր Նյուտոնը հանդիսավորապես անվանում է տիեզերական ձգողական ուժ, համարվում ել և վորպես նյութի եյական հատկություն, ապա վո՞րտեղ և անբացարելի տանգենցիալ այն ուժի աղբյուրը, վորը հենց միայն իրագործում և մոլորակների շարժումը ծիրերով: Ի՞նչպես են ծագել բույսերի ու կենդանիների անթիվ ու անհամար տեսակները: Յեկ ի՞նչպես ե, մասնավորապես, առաջացել մարդը, վորի վերաբերմամբ այնուամենայնիվ հաստատ հավաստված եր, թե նա հալիտենությունից ի վեր գոյություն չի ունեցել: Բոլոր այսպիսի հարցերին բնագիտությունը հաճախ միայն այն պատասխանն է տվել, թե այս բոլորի համար պատասխանատու յերուր իրերի արարիչը: Ուսումնասիրության յենթակա ժամանակաշրջանի սկզբին կոպերնիկոսը հրաժարական է տալիս թեորդիային, Նյուտոնն այս ժամանակաշրջանը վերջացնում է ստուժածային առաջին հարվածի պոստուլատով: Այն բարձրագույն ընդհանրացնող միտքը, վորին հասել ե այս ժամանակաշրջանի բնագիտությունը, դա բնության մեջ հաստատված կարգերի նպատակահարմարության միտքն ե, վոլֆյան տափակ թելեռողիան, ըստ վորի կատուներն ստեղծվել են միներին խժոելու նպատակով, միներն ստեղծվել են կատուներին կեր դառնալու համար, իսկ համակ բնությունը՝ արարչի իմաստությունը ապացուցելու համար: Այն ժամանակի փիլիսոփայության խոշոր արժանիքը պիտի ընդուներ այն, վոր չնայած իր ժամանակի բնագիտական

գլուխելիքների սահմանափակ վիճակին, նա չմոլորվեց, վոր նա սկսած Սպինոզայից և վերջացրած Փրանսական մեծ մատերիալիստներով՝ համառորեն աշխատեց աշխարհն ինքն իրենով բացատրել, դրա մանրամասն արդարացումը վերապահելով ապագայի բնագիտությանը:

XVIII դարի մատերիալիստներն ել, իմ կարծիքով, այս ժամանակաշրջանին են պատկանում, վորովհետեւ նրանց տնորինության ներքո չի գտնվել բնագիտական այլ նյութ, քան վերևում նկարագրածը: Նրանց համար գաղտնիք մնաց կանոնի եպօխակազմով աշխատությունը, իսկ Լավլասը հրապարակ յեկավ նրանցից շատ ուշ: Զմոռանանք, վոր թեև գիտության պրոգրեսը բոլորովին խորտակել ե այս հնացած աշխարհայացքը, բայց և այնպես XIX դարի ամբողջ առաջին կեսը մնում է նրա տիրապետության տակ և այժմ ել դեռ բոլոր դպրոցներում սա եյապես ուսուցվում է:

Առաջին ճեղքածքն այս քարացած աշխարհայեցողության մեջ առաջ բերեց վոչ թե բնագետը, այլ փիլիսոփան: 1775 թվին հրապարակ յեկավ կանոնի «Ընդհանուր բնապատմությունը և

¹ Թե վոր տատիճան անսասան կարող եր դեռ կառչած մնալ այս հայացքներին 1861 թ. մի ժարդ, վորի գիտական աշխատանքներն այդ հայացքների հաղթահարման համար իիսա արքեպաքոր նյութ են մատակարարում, ցույց են տալիս հետեւյալ կլասիկ խոսքերը:

«Մեր արեգակնային սիստեմի վողի մեխանիզմը, վորքան մենք ի վիճակի յենք թափանցելու դրա մեջ, ուղղված և գոյություն ունեցողը պահպանելուն, նրա տևական անփոփոխ դոյությանը: Ինչպես վո՞չ մի կենդանի, վո՞չ մի բույս յերկրի վրա հնագույն ժամանակներից ի վեր ավելի կատարելագործված չի գարձել կամ մի այլ բան չի գարձել, ինչպես բոլոր որգանիզմների մոտ տատիճանների հաջորդականությունը միմյանց կողքի յե, և վոչ թե միմյանցից հետո, ինչպես մեր սեփական ցեղը մտրմնական տեսակետով միշտ նույնն է մնացել—այսպես ել տիեզերական մարմինների մեծագույն բազմազնությունն անդամ մեզ իրավունք չի տալիս այս ձեերի մեջ զարգացման սոսկ տարրեր տատիճաններ ընդունել, ընդհակառակը, ամենայն ինչ, վոր ստեղծվել ե, հալաւարապես կատարյալ և իր մուշ: (Մելիեր, Հանրամատչելի ասողաբաշխություն, Բելլին, 1861 թ., 5-րդ հրատ., էջ 316): (Մանթապքությանմբ ու վկայակրոչումն նեղիւթին են):

Լուսանցքում մատիտով նշված ե «Բնությամն նկատմամբ հին աշխարհայացքի ընդարձացած բնույթը հող ստեղծեց՝ ամրազ բնագիտությունը վորպես մեկ ամրողջություն՝ ընդհանրացնող և հանրագումարող քննարկման համար. Փրանսական ենցիկլոպեդիաները, գենես զուտ մեխանիկորեն՝ մեկը մոտ—այնուհետև՝ միաժամանակ Սեն-Միրոնը և գերմանական բնագիտությունը՝ ալարտված չեղելով»: Խմբ:

յերկնքի թեորիան»։ Նախահարվածի հարցը վերացվեց մեջոնդից։ յերկիրն ու ամբողջ արեգակնային սիստեմը հանդես յեկան վորպես ժամանակի ընթացքում գոյացող։ Յեթև բնադեսների մեծ մասը չատ չզգվեր այն մտածությունից, վոր Նյուտոնն արտահայտել է՝ «Փիզիկա՝ դդուշացի՛ր մետաՓիզիկայից»—խոսքերով, ապա նրանք Կանտի մենակ այս հանճարեղ հայտագործումից արդեն այնպիսի հետևություններ պիտի անեցին, վոր կազմուեր նրանց գարտուղի անվերջ թափառումներից, և կտնտեսեցին սխալ ուղղությամբ վասնած աշխատանքի և ժամանակի հոկայական քանակը։ Չե՞ վոր Կանտի հայտագործության մեջ պարունակվում եր հետազա ամբողջ առաջմաղացման մեկնակետը։ Յեթև յերկիրը գոյացող մի բան է, ապա նրա արդի յերկրաբանական, աշխարհագրական, կլիմայական վիճակը, նրա բուսական ու կենդանական աշխարհը նույնպես պետք է գոյացող մի բան լինեցին, յերկիրը պետք է ունենար իր պատմությունը՝ վոչ միայն տարածության մեջ իրար կողքի, այլև ժամանակի մեջ՝ իրար հաջորդող։ Յեթև այս ուղղությամբ իսկույն շարունակեցին վճականորեն հետազոտել, ապա բնագիտությունը ներկա մոմենտին այժմյան վիճակից շատ ավելի առաջ գնացած կլիներ։ Սակայն ի՞նչ լավ բան կարող է տալ փիլիսոփայությունը։ Կանտի աշխատությունը անմիջական եֆեկտ առաջ չընթեց, մինչև վոր շատ տարբիներ հետո Լապլասն ու Հերշելը զարդացրին և ավելի ժամանական հիմնալորեցին նրա բովանդակությունը, դրանով հետընկան նախապատրաստելով «Քուշային հիպոթեզել»¹ ընդունումը։ Հետաղա հայտագործություններն ի վերջո ապահովեցին նրա հաղթանակը։ Նրանց մեջ կարևորագույններն եյին. հաստատուն աստղերի սեփական շարժման սահմանումը, տիեզերական տարածության գիմարդիր միջավայրի գոյության ապացուցումը, տիեզերական նյութի գիմիական նույնականության ասհմանումը՝ սպեկտրալ անալիզի միջոցով և չոփիացած հրաշեկ մշուշային այնպիսի զանդվածների գոյությունը, վորպիսիք Կանտն էր յենթադրում։

Սակայն թող թույլ տրվի կասկածել, թե բնադեսների մեծամասնությունը կդիտակցեր այն հակասությունը, վոր յերկի-

¹ Այն հիպոթեզները, վորոնք յերկնային բոլոր ժարմինները հրաշեկ մշուշապահներից ծագած են համարում։ —Խմբ.։

² Լուսանցքում մատիտով ամելացված ե. «Յերկրի պտույտի վրա ժամանթացունների արգելակող ապդեցությունը, վոր նույնպիս Կանտի դյուտներ, միայն այժմ և հասկացված»։ —Խմբ.։

բը վուփոխվում է, իսկ այն որդանիզմները, վոր նա կրում և իր վրա, իբր թե անփոփոխ են, յեթե ծնունդ առած այն հայացքը, թե մնությունը անփոփոխ ձևով գոյություն չունի, այլ գտնվում է գոյանալու ու փոփոխվելու մեջ,—ողնության չհաներ մյուս կողմից։ Առաջացավ յերկրաբանությունը և ցույց տվեց, վոր վո՛չ միայն գոյություն ունեն իրար հաջորդող և իրար վրա դասվորված գեոլոգիական շերտեր, այլև այդ շերտերում պահպահված են վաղուց արդեն բնաջինը յեղած կենդանիների խեցիներ և կմախքներ, այժմ գոյություն չունեցող բույսերի բներ, տերեններ և պառվաններ։ Պետք ե վճռականորեն ընդունմէր, վոր վո՛չ միայն յերկրագունդն իր ամբողջությամբ վերցրած, այլև նրա այժմյան մակերեսույթն ու նրա վրա ապրող բույսերն ու կենդանիները նույնական ունեն իրենց պատմությունը ժամանակի մեջ։ Սկզբում բավական զժկամությամբ եյին ընդունում այդ Կյուլյելի թեորիան յերկրի կրած հեղափոխությունների մասին հեղափոխական եր խոռօվիլ, բայց ուեալցիոն՝ գործնականում։ Աստվածային ստեղծագործության մեջ ակտի փոխարեն նա առաջադրում եր մի շարք բազմիցս կրկնվող ստեղծագործական ակտաներ ու հրաշքը դարձնում եր բնության եյական լծակ։ Լայելը միայն մտցրեց խելացի գատնիություն յերկրաբանության մեջ՝ փոխարինելով հանկարծահաս, արարչի քմահաճույքով առաջացած հեղափոխությունները յերկրի դանդաղ կերպարանափոխության աստիճանական ազդեցությամբ¹։

Լայելի թեորիան ավելի անհամատեղելի յեր կայուն որդանական տեսակների անփոփոխության հիպոթեզի հետ, քան նրան նախորդող բոլոր թեորիաները։ Յերկրի մակերեսույթի և նրա կենսական բոլոր պայմանների աստիճանական կերպարանափոխության միտքն անմիջականորեն հանդեց որդանիզմների աստիճանական կերպարանափոխության և փոփոխվող միջավայրին նրանց հարմարման ուսմունքին, այսինքն՝ տեսակների փոփոխականության ուսմունքին։ Սակայն ավանդությունը հզոր ուժ և վո՛չ միայն կաթոլիկ յեկեղեցու, այլև բնադրիտության մեջ։ Լայելն ինքը տարիներ շարունակ չնկատեց արդ հակասությունը, իր աշակերտ-

¹ Լայելի հայացքի, —գոնե իր սկզբանական ձևով, —թերությունն այն է, զար նա յերկրի վրա գործող ուժերն ընդունում եր իբրև հաստատուն, հաստատուն՝ թէ՛ վրակապես, թէ՛ քանակապես։ Յերկրի սառչելը դոյություն չունի նրա համար, յերկրը չի զարդանում վրաց ուղղությամբ, նա փոփոխվում է լոկ պատճական անկազ յեղանակով։ (Ենգելսի ծանրագրությունը)։

Ներն՝ ել ավելի պակաս։ Դա կարելի յէ բացատրել հենց այդ ժամանակամիջոցում բնագիտության մեջ գերիշխող զարձած աշխատանքի բաժանմամբ միայն, վորի չորրինիվ ամեն մեկը ավելի կամ պակաս չափով սահմանափակիեց գիտության իր ներ մասնագիտական ճյուղում, և միայն սակալաթիվ մարդիկ պահպանեցին լայն շրջահայեցության ունակությունը։

Հենց այդ ժամանակ ել Փիզիկան ուժեղ թափով առաջադիմեց։ Բնագիտության այս ճյուղի մեջ զարադրուխ կազմող 1842 թվականին՝ Փիզիկայի արդյունքներն ամփոփեցին գրեթե միաժամանակ յերեք տարրեր մարդիկ։ Մայերը Հայլբրոնում և Զուուլ Մանչեստրում հաստատեցին ջերմության փոխարկումը մեխանիկական ուժի և մեխանիկական ուժի փոխարկումը ջերմության։ Ջերմության մեխանիկական երվիվալենտի հավաստամը փարատեց ամեն տարակուսանք այդ մասին։ Միաժամանակ Գրովրովու պրոֆեսիոնալ-բնագետ, այլ անդլիացի, փաստաբան—Փիզիկայի մեջ արդեն ձեռք բերված առանձին արդյունքների սոսկ վերամշակման միջոցով ապացուցեց, թե բոլոր այսպես կոչված Փիզիկական ուժերը—մեխանիկական ուժը, ջերմությունը, լույսը, էլեկտրականությունը, մակնիսականությունը, և անդամ այսպես կոչված քիմիական ուժը,—վորոշ պայմաններում փոխարկվում են իրար՝ առանց ուժի վորեն կորսի, և այդպիսով միանդամ ևս Փիզիկական մեթոդների ողնությամբ հաստատեց Դեկարտի թեորիման, թե տիեզերքի մեջ գոյություն ունեցող շարժման քանակին անփոփոխելի յէ։ Դրա չորրինիվ Փիզիկական տարրեր ուժերը—Փիզիկայի այսպես կոչված անփոփոխելի «տեսակները»—վերածվեցին մատերիայի գիֆերենցավորված։ և վորոշ որենքներով իրար փոխարկվող շարժման զանազան ձևերի։ Գիտությունից վատրվեց այս-ինչ և այս-ինչ քանակի Փիզիկական ուժերի առկայության պատահականությունը, վորովհետեւ ապացուցվեց նրանց փոխադարձ կապը և մեկը մյուսին անցնելը։ Փիզիկան, ինչպես ավելի առաջ աստղաբաշխությունը, հանգեց այն յեղակացության, վոր անհրաժեշտորեն մատնանշում եր շարժվող մատերիայի հավերժական շրջապտույտի՝ վորպես գիտության վերջին հետևության՝ վրա։

Քիմիայի զարմանալի արագ զարգացումը Լալուայյեյից ու մանավանդ Դալտոնից հետո մի այլ կողմից խորտակեց բնության ժամանքն յեղած հին պատկերացումները։ Անորդանական հանապարհով քիմիական այնպիսի միացություններ ստանալու չնորդիվ, վորոնք մինչ այդ առաջ ելին գալիս միայն կենդանի որ-

շանիգոյնի մեջ, —ապացուցվեց, վոր քիմիական որևէնքներն որդանական մարմինների համար նույն ուժն ունեն, ինչ անորդանականների համար, և լցվեց խոչըր մասն այն առհավետ անանցանելի վիճի, վոր կար անորդանական ու որդանական քիմիայի միջև և վոր ընդունում եր գեռ կանոց։

Վերջապես, բիոլոգիական ուսումնասիրության առաջարիզում անցյալ (այսինքն XVIII) դարի կեսերից սխատեմատիկորեն կազմակերպված գիտական ճանապարհորդությունները և եքսպեդիցիաները, յեվրոպական գաղութավայրերի ավելի ճշգրիտ հետազոտությունները բոլոր աշխարհամասերում՝ այնտեղ ապրող մասնագետների միջոցով, այնուհետեւ պայմանառողիայի, անատոմիայի ու Փիզիոլոգիայի առաջադիմությունը, մանավանդ միկրոսկոպի սխատեմատիկ կիրառումից ու բջիջի հայտագործումից ի վեր, —այս բոլորն այնքան նյութ ելին ամբարել, վոր հնարավոր և միաժամանակ անհրաժեշտ գարձավ համեմատական մեթոդի¹ կիրառումը։ Մի կողմից, համեմատական Փիզիկական աշխարհագրության չնորդիվ պարզվեցին տարրերը Փլորանների և Փառւնաների կենսապայմանները, իսկ մյուս կողմից՝ բաղդատվեցին տարրեր որդանիպմների նույնատեսակ որդանները, այն ել վոչ միայն հասուն վիճակում, այլև իրենց զարգացման բոլոր աստիճաններում։ Վորքան խոր և ճշգրիտ եր կատարվում այս հետազոտությունը, այնքան ավելի չքանում եր անփոփոխելիորեն հաստատված որդանական բնության ընդարձացած սխատեմը։ Վոչ միայն կենդանիների և բույսերի առանձին տեսակների սահմաններն ավելի ու ավելի հեղհեղուկ գարձան, այլև յերեան յեկան կենդանիներ, ինչպես ամֆիօքսուսն ու լեսլիոդոմիրենը², վորոնք վորպես թե ծաղրեցին մինչ այդ զոյություն ունեցող վողջ կլասիֆիկացիայի վրա³։ Յեկ վերջապես գտնվեցին որդա-

1 Լուսանցքում ավելացված և մատիսով՝ «Եմբրիոլոգիա»։ —Խմբ.։

2 Ամֆիօքսուսը տաք ծովկերում (Հնդկական ովկիանոս, Խաղաղ ովկիանոս, Մալայան արփիսկելալի և Յապոնիայի տիեզերի ժուա, Միջերկրական ծով, Սև ծով) առլորդ կենդանի յէ։ Նա անցաւ և ներկայացնում անվաղնաշարավորներց (Ճիճուններց) ուսպի վաղաշարավորները։ Լեսլիոդոմիրենը թոքալոր կամ յերկերու չնչող ձկների խմբին պատկանող կենդանի յէ, վորոնք ունեն և թռչող գիմուտ։ Ապրում և զարալային Ամերիկայում։ —Խմբ.։

3 Լուսանցքում մատիսով ավելացված և «Յերասողուսուս», նույնը նույն արխանցութեանը և այն։ Յերասողուսուս (յեղջարսատամ) յերկերապ չնչող ձուկ և, վոր ապրում և Ամսարալիայում։ Արխենապերիքը բնաջնջված կենդանի յէ, վոր թռչունների զամբ հնագույն ներկայացնուցին և և միաժամանակ ոռղանների վորոնք զծերով և ոժաված։ —Խմբ.։

նիզմներ, վորոնց մասին անկարելի յեր անդամ առել՝ կենդանական աշխարհին են պատկանում նրանք, թե բուսական։ Հետզհետեւ շարունակում եյին լցվել պալեոնտոլոգիայի տարեկրության բացվացքները, և ամենահամառներն իսկ հարկադրված եյին առանելու այն զարժանալի զուղահեռը, վոր դոյլություն ունի որդունական աշխարհի զարդացման՝ իր ամբողջությամբ վերցրած՝ ու առանձին որդանիզմների զարդացման պատմության միջեւ, այս կերպ Արիանայի թել տալով, վորը պիտի գուրս բերեր այն լարբինթոփ, վորի մեջ թվում և թե ավելի ու ավելի եյին խճճվում բուսաբանությունն ու կենդանաբանությունը։ Բնորոշե, վոր գրեթե միաժամանակ, յերբ կանալ հարձակում գործեց արեգակնային համակարգության հավերժականության ուսումունքի գեմ, Ք. Ֆ. Վոլֆը 1759 թվին առաջին հարձակումը գործեց տեսակների մշտնջենական թերթայի գեմ՝ հոչակելով և վոլուցիայի ուսումունքը։ Բայց այն, վոր նրա մոտ հանձարեղ կռահում եր միայն, Ոկենի, Լամարկի, Բերի մոտ ընդունեց վորոշյալ ձև և հաղթականորեն անցկացվեց գիտության մեջ ճիշտ հարյուր տարի հետո, 1859 թ., Դարլինի կողմից։ Գրեթե միաժամանակ հաստատվեց, վոր պրոտոպլազման ու բջիջը, վորոնք վալուց արդեն ճանաչված եյին վորպես բոլոր որգանիզմների ստրուկտորայի վերջին բաղադրիչ տարր, հանդիպում են նաև վորպես ինքնուրույն ասլորդներ, իրեն ստորին որգանական ձևեր։ Դրանով նվազագույն չափի հասավ որգանական ու անօրգանական աշխարհի միջև յեղած վիճը, ու դրա հետ միասին վերացավ ամենալուրջ խոչընդուներից մեկը՝ զարդացման միջոցով որգանիզմների ծաղման մասին յեղած ուսումունքի ճանապարհին։ Բնության նկատմամբ նոր հայեցողությունն իր հիմնական գեներով պատրաստ եր, ամեն ընդարձացած բան հոսում դարձավ, ամեն անշարժունը շարժուն դարձավ, ամեն մշտնջենական համարված առանձին բան դարձավ անցողիկ, ավացուցվեց, վոր ամբողջ բնությունը շարժվում և մշտնջենական հոսանքի և շրջապտույտի մեջ։

Յեվ ահա մենք կրկին վերադարձանք հունական փելիստիւյության մեծ հիմնադիրների հայացքին, թե ամբողջ բնությունը, սկսած նրա մանրագույն մասնիկներից մինչեւ մեծագույն մարմինները, սկսած ավաղահատիկից և վերջացրած արեգակով, սկսած պրոտիստից և վերջացրած մարդով, գտնվում և համերժական ծագման ու վոչնչացման մեջ, անընդհատ հոսանքի մեջ, անշարժ շարժման ու փոփոխման մեջ։ Միայն մի եյական տարբե-

րությամբ, վոր այն, ինչ հույների մոտ հանձարեղ ինտուիցիա յեր, մեզ մոտ խիստ գիտական փորձի վրա հիմնված հետազոտության հետեւանքն է, զբա համար ել շատ ավելի վորոշ ու պարզ ձև ունի։ Ճիշտ և, այդ շրջապտույտի եմպիրիկ պակացուցումը գեռ բոլորովին զերծ չե բացերից, բայց դրանք աննշան են համեմատած այն ամենի հետ, վոր արդեն հավաստված և հաստատուն կերպով։ այդ բացերը տարեցտարի հետզհետեւ լրանում են։ Յեկ միթե այդ ապացուցումը կարող ե իր մանրամասների մեջ զերծ լինել բացերից, յեթե նկատի ունենաք, վոր գիտության կարեռագույն ճյուղերը՝ անդրմուրակային աստղաբաշխությունը, քիմիան, յերկրաբանությունը՝ հազիվ թե հարյուրամյակի կյանք ունեն, համեմատական մեթոդները ֆիզիոլոգիայի մեջ՝ հազիվ 50 տարիա գոյություն ունեն իրեն գիտություն և բնիքը; կյանքի գրեթե ամեն մի զարդացման այդ հիմնական ձևը, քառասուն տարի չկա, ինչ հայտագործված ե¹։

Հրաշեկ գաղանման պատվող մշուշաղանզվածներից, —վորոնց շարժման որենքները թերեւ մեղ հայտնի կդառնան, յերբ միքանի հարյուրամյակների գիտողությունները պարզ գաղափար կտան աստղերի սեփական շարժման մասին, —սեղմվելու և սառչելու չորհիվ զարդացել են մեր տիեզերական կղզու անթիվ արեգակներն ու արեգակնային սիստեմները, վորը սահմանավորվում և նիրկաթինի ծայր աստղային ողակներով։ Այս զարդացումն ակներեաբար տեղի չի ունեցել ամեն տեղ նույն արագությունը։ Աստղաբաշխությունն ավելի ու ավելի հարկադրված և ընդունել մեր համաստեղության մեջ խավար, վոչ սոսկ մոլորակային մարմինների, այսինքն մարած արեգակների, գոյությունը (Մեդլեր)։ մյուս կողմից (ըստ Սեկլիի)²՝ մեր համաստեղությանն ե պատկանում գաղանման մշուշարծերի մի մասը՝ վորպես տակավին չեկավորված արեգակներ։ գրանով չի բացառվում այն, վոր մյուս մշուշաղանզվածները, ինչպես պնդում և Մեդլերը, հեռավոր ինքնուրույն տիեզերական կղզիներ են, վորոնց հարաբերական դարձացման աստիճանը վորոշելու յե սպեկտրոսկոպը։

Թե ինչպես և արեգակնային համակարգությունն առանձին մշտնջացյին զանզվածից զարգանում, այդ հանդամանորեն ու մին-

¹ Այս հատվածն Ենգելիք ձեռագրում՝ նախորդ և հաջորդ արգացից բառանձան և հորիզոնական զեներով և չեղված է չեղակի զեներով, ինչպես ուղղաբար այսպես եր վարփում ենգելուը ձեռագրի այն հատվածների նկատմամբ, գործոց ինքն ողագործել ե իր մյուս աշխատություններում։ Ամբ։

չե այժմ չգերազանցված կերպով ցույց ե ավել կազմառ, հետաքա գիտությունն ավելի ու ավելի յե հաստատել նրա մտքերի ընթացքը:

Այս ձեռվ առաջ յեկած առանձին մարմինների՝ արեղակների, մոլորակների ու արբանյակների վրա սկզբում իշխում ե նյութի շարժման այն ձեր, վոր մենք անվանում ենք ջերմություն: Խոսք ել չի կարող լինել տարրերի քիմիական միացումների մասին նույնիսկ այնպիսի ջերմության պայմաններում, վորպիսին այսոր տակալին ունի արեղակը: Թե այդ պարագաներում ջերմությունը վոր աստիճան ելեկարականության կամ մագնիսականության և փոխարկվում, այդ ցույց կտան արեղակի մասին կատարած հետագա դիտողությունները. վոր արեղակի վրա տեղի ունեցող մեխանիկական շարժումները բացառապես առաջանում են ջերմության ու ծանրության բազումից, այդ արդեն այժմ ել կարելի յե դրեթե հաստատված համարել:

Առանձին մարմիններն այնքան ավելի արագ են սառչում, վորքան փոքր են նրանք: Առաջ սառչում են արբանյակները, առաերթիններն ու մետալները, ինչպես և մեր լուսինը, վոր վաղուց արդեն սառել ե: Ավելի դանդաղ են սառչում մոլորակները, իսկ բոլորից դանդաղ՝ կենտրոնական լուսատուն:

Քանի սառումն առաջ ե գնում, այնքան ավելի յե սկզբում առաջնակարգ տեղ գրավել իրար փոխարկվող ֆիզիկական շարժման ձերի փոխազդեցությունը, մինչև վոր, վերջապես, հասնում ե այն կետը, վորտեղից սկսում ե իրեն զգալ տակ քիմիական խնամակցությունը, յերբ մինչ այդ քիմիակես անտարբեր տարրերը հաջորդաբար քիմիապես դիֆերենցավորվում են, ստանում են քիմիական հատկություններ, միացություններ են կարմում իրար հետ: Այս միացությունները անդադար փոփոխվում են ջերմության նվազման զուգընթաց. իսկ ջերմությունը վոր միայն ամեն մի տարրի, այլև ամեն մի առանձին բազադրության վրա ազդում ե տարրեր յեղանակով: Այս սառման հետ միասին գաղակերպ նյութի մի մասը նախ հեղուկ, իսկ հետո նաև պինդ վիճակի յե անցնում ե դրա շնորհիվ նոր պայմաններ են ստեղծվում:

Այն ժամանակը, յերբ մոլորակը ձեռք ե բերում պինդ կեղեւ ե իր մակերեսութիւնի վրա ջուր ե ամբարում, զուգադիպում ե այն ժամանակին, վորից սկսած մոլորակի սեփական ջերմությունն սկսում ե ավելի ու ավելի նվազ նշանակություն ստանալ լինարունական լուսատուից նրա ստացած ջերմության համեմատու-

թյամբ: Նրա մթնոլուր դասնում ե ողերեսութաբանական յերեվույթների թատերաբեմ՝ այս բառի ժամանակակից իմաստով, իսկ նրա մակերեսութիւնը՝ թատերաբեմ յերկրաբանական փոփոխությունների, վորոնց ժամանակ մթնոլուրային տեղումներից առաջած շերտավորումները հետզհետեւ զերակլություն են ստանում այն դանդաղորեն թուլացող ազդեցությունների հանդեպ, վոր ունեն հրահեղուկ միջուկին արտաքին կեղեւի վրա:

Վերջապես, յեթե բարեխանությունն իջնում ե այն սառինան, վոր—սառնվաղն մակերեսութիւնի վորեւ զգալի տեղում—չի անցնում այն սահմանը, վորի մեջ սպիտակուցն ընդունակ և կյանքի, ասպա այլ նախատարարություն քիմիական նախառայիմաններում առաջանում է կենդանի պլոտոպալզման: Թե վորոնք են այդ նախառայիմանները—տակալին այժմ մենք չգիտենք: Յեվ այդ զարմանակի չե, քանի վոր մինչև այժմ վորոշված չե սպիտակուցի քիմիական փորմուլան և մենք նույնիսկ դեռ չդիտենք, թե վորոքան քիմիապես տարրեր սպիտակուցային մարմիններ գոյություն ունեն, և քանի վոր սոտավորապես տաս տարի յե միայն, ինչ հայտնի յե դարձել, վոր ստրուկտուրայից բոլորովին զուրկ սպիտակուցը կատարում է կյանքի բոլոր եյական փունկցիանները՝ մարսողություն, արտաքրորում, շարժում, կծկում, գրգիռների հակազդում, բազմացում¹:

Թերեւս հազարամյակներ են անցել, մինչև վոր ստեղծվել են այն պայմանները, վորոնցում հնարավոր դարձավ հաջորդ սպիտակուցից առաջածավալ, կուրիդ ու թաղանթ կազմվելու միջոցով, առաջին բջիջը: Սակայն այս սուածին բջիջով դրվել ե նաև ամբողջ որգանական աշխարհի ձեռակերպման հիմքը: Նախ զարդացել են, ինչպես այդ պետք ե յենթադրել պալեոնտոլոգիական տարեգրության բոլոր ավյալներից յելներով, անրջիջ ու բջիջավոր պրոտիստների անթիվ տեսակները, մորփոլոգիայից առաջին կերպ համապատասխան տարեգրության բոլոր ավյալները, անրջիջ ու բջիջավոր պրոտիստների անթիվ տեսակները, վորոնցից մեղ հասել ե միակ Eozoon Canadense², դրանցից միջանիսը դիֆերենցավորվելով՝ դարձել են սուածին բույսերը, իսկ մյուսները՝ առաջին կենդանիները: Իսկ առաջին

¹ Ենդեւան ամենայն հավանականությամբ նկատի ունի երեսակեկից աշխատությունները, վոր նա սուածին անդամ հրապարակեց իր Ալրանիպների ընդհանուր մորփոլոգիայից առաջին հատորի մեջ:—Խմբ:

² Ենոպան կանագենենց հանածու, գանձած և կանագայում և համարիչ հանածու աշխատավական ծագում ունենալու կարծիքը—Խմբ:

կենդանիներից—առավելապես հետագա դիֆերենցավորման չոր-
հիվ—զարգացել են կենդանիների անթիվ ու անհամար դասերը,
կարգերը, ընտանիքներն ու տեսակները. և վերջում՝ վողնաշա-
րավորների ձևը, վորի մոտ նյարդային համակարգությունն իր
պարզացման գաղաթնակետին է հասնում. և այլա զարձյալ, վեր-
ջապես, սրանից այն վողնաշարավորը, վորի մեջ բնությունը հա-
սավ ինքն իր գիտակցությանը, —մարդը:

Մարդուն ել առաջացել է դիմիկերենցիացիայի միջոցով և այն ել վո՞չ միայն ինդիվիդուալ, —մի հատիկ ձվարջիջից, դիմիկերենցիա-ցիայի միջոցով, մինչեւ ամենաբարդ որդանիվմը, վոր բնությունն արտագրել է, —այլև պատմական խմաստով։ Յերբ հաղարամյակ-ինքի պայքարի հետևանքով ձեռքը դիմիկերենցավորվեց վոտքից և ուղիղ քայլվածքը վերջապես հաստատվեց, այն ժամանակ մարդն անջանակնեց կապիկից, և դրվեց հողաբաշխ լեզվի և ուղեղի հոր զարդացման հմտքը, վորի չնորդիվ այդ որից անանցանելի վիճ առաջացավ մարդու և կապկի միջեւ։ Ձեռքի մասնագիտացումը գործիքի յերեան գալ է նշանակում, իսկ գործիքը նշանակում է սպեցիֆիկ մարդկային գործունեյություն, մարդու կերպարանա-փոխող հակագդեցությունը բնության վրա, արտադրություն։ Ենդանիներն ել ներ իմաստով գործիքներ ունեն, սակայն վոր-պես իրենց մարմնի անդամ՝ մըջյունը, մեղուն, կուղը։ Կենդա-նիներն ել արտադրում են, բայց նբանց արտադրողական ազգե-ցությունը ըրջապատող բնության վրա արդ վերջինիս նկատմամբ համար ե զերոյի։ Միայն մարդուն հաջողվեց իր գործը զնել բնության վրա։ Նա վոչ միայն բույսերի ու կենդանիների տար-բեր ահսակները տեղափոխեց, այլև փոփոխեց իր բնակավայրի արտադրին տեսքը, կլիման, փոփոխեց անդամ բույսերն ու կեն-դանիները՝ այն աստիճան, վոր իր գործունեյության հետևանք-ները չքանալ կարող են միայն, յերբ առհասարակ յերկրագունդն ել մահանա։ Յեզ նա դրան հասավ ամենից առաջ ու գլխավորա-պես ծեռչի չնորհիվ։ Նույնիսկ չողեմեքենան, վոր մինչեւ այսոր նրա հոգրագույն զենքն է բնության կերպարանափոխության գործում, վորպես գործիք՝ վերջին հաշլով հիմնված և ձեռքի գործունեյության վրա։ Սակայն ձեռքի զարդացման զուգահեռ-քայլ առ քայլ զարդացավ նաև գլխավոր, ծագեց զիտակցությունը, սկզբում՝ առանձին գործունական ոգտավետ գործողությունների զիտակցությունը, իսկ հետագայում, —այս հիման վրա ամելի բարենպաստ պայմաններում ապրող ժողովուրդների մեջ, —այդ ոգտակար գործողությունները պայմանավորող բնական որենք-

Ների ըմբռնումը: Խսկ քնության որենքների արագ աճող իմացության համընթաց՝ աճում են նաև քնության վրա հակազդող միջոցները. ձեռքով մենակ մարդիկի յերեկք չելին ստեղծի շոգեմիջենան, յեթե մարդկային ուղղեղը նրա հետ ու նրան առընթեր և մասամբ նրա շնորհիվ համապատասխան ձեռվ չպարզանար:

Մարդու հետ մենք թեակոխում ենք պատմության բնագավառը : Կենդանիներն ել ունեն պատմություն, այն եւ իրենց ծագման, տատիճանական զարգացման պատմությունը մինչև նրա այժմյան վիճակը . սակայն նրանք այս պատմության պասսիվ որյեկտներն են հանդիսանում . իսկ ինչ չափով նրանք իրենք մասնակցում են այդ պատմությանը, այլ տեղի յեւ ունենում առանց նրանց գիտության և ցանկության : Իսկ մարդիկ, ընդհակառակը, վարքան հեռանում են կենդանիներից բառիս նեղ խմասով, այնքան ավելի իրենք են կերտում իրենց պատմությունը, իրենց գործողությունները գիտակցելով, և այնքան ավելի թուրանում և աննախառեսելի գործոնների, ստուգման ու հսկողության չենթարկվող ուժերի ազդեցությունն այդ պատմության վրա, այնքան ամելի ճշգրիտ և համապատասխանում պատմական հետևանքը նախապես գրած նպաստակին : Սակայն յեթե այս մասշտարով մոռենալու լինենք մարդկային պատմությանը, անզամ արդի ամենապարզացած ժողովուրդների պատմությանը, կատարենք, վոր այստեղ տակապին գոյություն ունի խոշոր անհամապատասխանություն առաջարեած նպատակների ու ձեռք բերած որդյունքների միջև, վոր տակապին շարունակում են վերակշռել անհախառեսելի հետևանքները, վոր հսկողության չենթարկվող ուժերը շատ ավելի հզոր են, քան պլանաշափ կերպով շարժման մեջ գրգոր ուժերը : Յեվ այլ կերպ չի ել կարող լինել, քանի ունի մարդկային ամենակարեսը պատմական գործունելությունը, վոր նրանց կենդանական գիճակից մարդկայինի բարձրացրեց, վորը նրա գործողությունների բոլոր այլ տեսակների նյութական հիմունքն է կազմում, —նրա կենսական պահանջմունքները բավարարող արտադրությունը, այսինքն ներկայումս՝ հասարակական արտադրությունը, հատկապես յենթարկված և անկորութու ուժերի նրանց գիտավորությունների մեջ չմտնող ազդեցությունների կույր խաղին և այստեղ զերևս միայն վորպես բացառություն և ցանկացած նպատակն իրականացվում, իսկ շատ ավելի հաճախ իրագործվում են զրան հակագիր արդյունքները : Ամենաառաջադեմ արդյունարերական յերկրներում մենք հնապանդեցրել ենք բնության ուժերն ու սպասարկու գարձել մարդուն . մենք գրա

շնորհիվ անսահման բազմապատկել ենք արտադրությունը, այսպես վոր հիմա մի յերեխա ալելի յի արտադրում, քան հարյուր հասակավոր մարդ անցյալում։ Բայց վո՞րն և այդ արտադրության աճման հետեւանքը։ Աճող գերաշխատանք, մասսաների աճող թշվառություն և ամեն մի տաս տարին մի անդամ՝ մի խոչը կրախ։ Դարվինը չեր կասկածում, թէ ինչպիսի դառն սատիրա յի դրել մարդկանց ու մանականդ իր հայրենակիցների վրա՝ ապացուցելով, վոր ազատ մրցությունը, գոյության կոփը, վոր տնտեսագետները վորպես պատմական խոչորագույն նվաճում են հոչակում, հանդիսանում են կենդանական աշխարհի նորմալ վիճակը։ Հասարակական արտադրության գիտակցական կազմակերպությունը միայն՝ պլանաչափ արտադրությամբ և բաշխմամբ՝ կարող և մարդուն հասարակական տեսակետից մնացած կենդանական աշխարհից բարձրացնել, ճիշտ այնպես, ինչպես վոր արտադրությունն առհասարակ հատուկ բիոլոգիական իմաստով բարձրացնել և մարդկանց։ Պատմական զարդացումն որեցոր ամելի անընդունակ և որեցոր ամելի հնարավոր և դարձնում այդպիսի կազմակերպությունը։ Դրանից սկիզբ կառնի իր թվականությունը պատմական մի նոր եպոխա, յերբ մարդիկ իրենք, իսկ դրա հետ միասին նրանց գործունեյության բոլոր բնագավառները, մասնաւորապես բնագիտությունը, այնպիսի հառաջադիմություն կանեն, վորի հանդես բոլորովին կնսեմանա մինչեւ այժմ ամբողջ արվածը։

Սակայն «ամեն ինչ, վոր ծագում և, արդանի յեւ վոչնչացման»¹։ Թերեւ կանցնեն դեռ միլիոնավոր տարիներ, կծնվեն ու զերեզման կիշնեն հարյուր-հազարավոր սերունդներ, սակայն անողոքարար վրա կհասնի այն ժամանակը, յերբ արեղակի թուլացած ջերմությունն այլևս անդոր կլինի հալելու բնենոներից շարժվող սասույցը, յերբ հասարակածում ամելի ու ամելի կենտրոնացող մարդկությունը անկարող կլինի այնտեղ ել գտնել իր կյանքի համար անհրաժեշտ ջերմությունը, յերբ աստիճանաբար կչքանա որդանական կյանքի վերջին նշույն ել, և յերկիրը—մի անկենդան, սառած գունդ՝ նման լուսնին—թանձրամած խավարում ու շարունակ ամելի նեղ շավիղով կպտտվի նույնպես մեռած արեղակի շուրջը, վերջապես, նրա վրա ել կընկնի։ Նույն վիճակին կմատնվեն և մյուս մոլորակները՝ վոմանք յերկրից վրա, վոմանք ուշ։ ներդաշնակ համարդարպված, լուսավոր, ջերմ արեղակնային սիստեմի վոխարեն կմնա միայն մեկ ցրտաշունչ ան-

¹ Մեֆիստօֆելի խոսքերը Գյոթեյի «Ֆառաւսում»։ — Խմբ։

կենդան գունդ, վոր միայնակ չարունակում և ուղին տիեզերական տարածության մեջ։ Յեկ վաղ թե ուշ մեր արեղակնային սիստեմի ճակատագրին՝ մահվան, ի՞նչ կլինի հետո։ Կշարունակի՞ արդյոք արեղակի դիակը թափալի անսահման տիեզերական կղզիներին, նույնը կլինակի մյուս անթիվ ու անհամար տիեզերական կղզիներին, անդամ նրանց, վորոնց լույսը յերեք յերկրին չի հասնի, քանի դեռ նրա վրա ապրում և այդ լույսը տեսնելու ընդունակ մարդկային աչքը։

Բայց յերբ այս արեգակնային սիստեմը իր կյանքի ուղին ավարտի և մատնվի ամեն վախճանավորի ճակատագրին՝ մահվան, ի՞նչ կլինի հետո։ Կշարունակի՞ արդյոք արեղակի դիակը թափալի անսահման տարածության մեջ վորպես մի դիակ, և բնության բոլոր յերեմնի բազմազան դիֆերենցավորված ուժերը կվերածվե՞ն առհավետ շարժման միակ ձեխն՝ ձգողականության։ «Կամ ել—ինչպես հարցնում ե Սեկլին (էջ 810), —բնության մեջ գոյությունն առնե՞ն արդյոք ուժեր, վորոնք կարող են մեռած սիստեմություն ունե՞ն արդյոք ուժեր, վորոնք կարող են մեռած սիզբնական վիճակը և նրան վերընծայել հրաշեկ մշուշապանգվածի սկզբնական վիճակը և նրան վերստին մի նորոգ կյանքի կոչել։ Այդ հայտնի չեմ մեղ»¹։

Իհարկե, մենք այդ չգիտենք այն իմաստով, ինչպես ովտենք, վոր 2×2=4, կամ՝ վոր մատերիայի ձգողականությունը ավելանում կամ պակասում և հեռավորության քառակուսուն հարաբերական։ Սակայն թեորետիկ բնագիտության մեջ, —վորն իր աշխարհայիցողությունը հնարավորության չափ ներդաշնակ մի ամբողջություն և դարձնում և առանց վորի ներկայումս տափակ եմպիրիկն անդամ չի կարող կառավարվել, —մենք ստիպված ենք շատ հաճախ վոչ լիովին հայտնի մեծություններն ել գործառել։ և մտքի հետևողականությունը պետք և միշտ ոգնության հասնեղ գեռ անկատար գիտելիքներին առաջ շարժվելու։ Արդի բնագիտությունը հարկադրված և յեղել փիլիսոփայությունից փոխ առնել շարժման անվոչնչանալիության թեզը։ առանց դրան բնագիտությունն անկարող և այլևս գոյություն ունենալ։ Սակայն նյութի շարժումը սոսկ կոպիտ մեխանիկական շարժում, տեղի հասարակ փոփոխություն չե։ նա ջրմություն և լույս, ելեկտրական ու մազնիստական լարում, քիմիական միացում ու տարրալուծում, կյանք և, վերջապես, գիտակցություն։ Ասել, թէ մատերիան իր հավետ անսահման գոյության ամբողջ ընթացքում միայն մեկ անդամ, այն ել մեկ ակնթարթով միայն իր գոյության մշտնչե-

¹ Ենգելսն այստեղ բերում և իտալական աստղաբաշխ Ա. Սեկլիի իսուքերը նրա «Արեգակ» գրքից (գերմաներեն հրատարակությունը 1872 թ.)։ —Խմբ։

հական համեմատությամբ, հնարավորություն և ունեցել իր շարժումը դիմումը ծագելուն և այդպիսով այդ շարժման ամբողջ հարստությունը ծավալելու և վոր դրանից հետո ու դրանից առաջ նա հավետ դատապարտված և սահմանափակվելու լոկ տեղափոխությամբ, այդ նշանակում և պնդել, թե մատերիան վախճանական և և շարժումն անցողիկ: Շարժման անվոչնչանալիությունը պետք և հասկանալ վո՞չ միայն քանակական, այլև վորակական իմաստով: Մատերիան, վորի սոսկ մեխանիկական տեղափոխությունը թեե իր մեջ հնարավորություն ունի նպաստավոր պայմաններում դառնալ ջերմություն, ելեկտրականություն, քիմիական ներգործություն, կյանք, բայց վորը սակայն ի վիճակի չե այս պայմաններն իր միջից արտադրելու, այդպիսի ժամանական կրօքը և շարժումը: Մի շարժում, վորը կարցրել և իրեն հատուկ արրեր ձեւրի վերածվելու ունակությունը, այդպիսի շարժումն ունի թեե dynamis [հնարավորություն], սակայն զուրկ և energēia-ից [իրականությունից], ուստի և մասամբ վոչնչացված և: Սակայն թե մեկը և թե մյուսը անմտածելի յեն:

Մի բան համենայն զեկու անկասկած և.—յեղել և մի ժամանակ, յերբ մեր տիեզերական կողմու մատերիան ջերմության և փոխակերպել մի այնպիսի վիթխարի քանակությամբ շարժում,—իսկ թե ինչ տեսակ, այդ մինչ այսոր հայտնի չե մեզ,—վոր նրանից առաջանալ կարող ելին առնվազն 20 միլիոն աստղերին պատկանող արեգակնային սիստեմներ (ըստ Մեդլերի), սիստեմներ, վորոնց աստիճանաբար կործանումն ել նույնպես հավաստի յե: Ի՞նչպես և տեղի ունեցել այդ փոխակերպումը, մեզ այդ նույնչափ քիչ հայտնի յե, վորքան և Պատեր Սեկլիին այն, թե արդյո՞ք մեր արեգակնային սիստեմի ապագա «carat mortuum»¹ յերեւե կղաղաք հում նյութ նոր արեգակնային սիստեմների համար: Սակայն այսուղ մենք հարկադրված ենք կամ դիմել արարչի ոգնության, կամ անել այն յեզրակացությունը, թե մեր տիեզերական կղզու արեգակնային սիստեմների համար շիկացած հում նյութը առաջ և յեկել բնական ձանապարհով՝ շարժման փոխակերպությունների միջոցով, վորոնք շարժուն մատերիային ի բնե հասուկ են և վորոնց պայմանները, ուրեմն, մատերիայից պետք և վերաբարդրվեն, —թեկուզ միլիոն-միլիոն տարիներ հետո, —

¹ «carat mortuum»—բառացի՝ մեռած գլուխ, այսուղ մեռյալ մնացորդուր իմաստով:—Խմբ:

ավելի կամ պակաս պատահականորեն, սակայն և պատահականության հատուկ անհրաժեշտությամբ:

Այսորինակ փոխակերպման հնարավորությունն որըստորեւ սկսում և ավելի ընդունելի դառնալ: Կազմվել է այն համոզաւելքը, թե յերկնային մարմինների վերջնական վիճակն իրար վրա ընկնելն է, և նույնիսկ հաշվում են ջերմության այն քանակը, վերապետք և զարգանա այսպիսի փոխակարգ ընդհարումների ժամանակ: Նոր աստղի հանկարծակի յերեան գալը, վաղուց հայտնի աստղերի նույնքան հանկարծական պայծառ լուսավորվելը, վորոնց մասին մեզ տեղեկացնում և աստղաբաշխությունը, ամենից զյուրին բացարձում, են այսպիսի ընդհարումներով: Հստվորում պիտի նկատի ունենալ, վոր վո՞չ միայն մեր մոլորակախումբն և պտավում արեգակի շուրջը, և մեր արեգակը մեր տիեզերական կղզու ներսում, —այլև մեր ամբողջ տիեզերական կղզին շարժում և տիեզերական տարածության մեջ՝ պահպանելով ժամանակավոր հարաբերական հավասարակշռություն մնացյալ տիեզերական կղզիների նկատմամբ, վորովհետեւ նույնիսկ աղատ շարժող մարմինների հարաբերական հավասարակշռությունը կարող և գոյություն ունենալ միայն փոխակարծաբար պայմանավորված շարժմանը գեղագովածում: Բացի այդ, վորանք ընդունում են, վոր բարեխառնությունը տիեզերական տարածության մեջ ամեն տեղ միենանույնը չե: Վերջապես, մենք գիտենք, վոր մեր տիեզերական կղզու անհամար արեգակների ջերմությունը, բացառությամբ շատ չնչին մասի, կորչում և տարածության մեջ՝ ինչպես զանալով բարձրացնել տիեզերական տարածության բարեխառնությունը թեկուզ միայն մի միլիոններորդական աստիճանով ըստ Յելախուսի: Ի՞նչ և լինում այս հսկայաքանակ ջերմությունը: Զբանում և ընդմիջում տիեզերական տարածությունը ջերմացնել փորձելով, դադարում և գործնականորեն գոյություն ունենալուց, միայն թեորիափես պահպանվելով այն փաստի մեջ, թե տիեզերական տարածությունը ջերմացել և ջերմաչափի այն փոքրիկ աստիճանամասով, վոր արտահայտվում և տասը կամ ավելի գերոյնվ սկսվող տասնորդական կոտորակով: Այս յենթագործությունը ժիառում և շարժման անվոչնչանալիությունը, դա հնարավոր և համարում, թե տիեզերական մարմինները հաջորդաբար մել մեկու վրա ընկնելով՝ առկա մեխանիկական շարժումը կիերածվի ջերմության, վորը կճառագայթվի տիեզերական տարածության մեջ, վորով, հակառակ «ուժի անվոչնչանալիության», ընդհանրապես կղզադարեր ամեն մի շարժում: (Ի միջի այլոց, այսուղ

յերեան և գալիս, թե վորքա՞ն անհաջող է շարժման անվոչնչանալիություն արտահայտության փոխարեն ուժի անվոչնչանալիություն գործածելը): Այդպիսով մենք հանգում ենք այն յեղբակացության, թե վորեւ ուղիով, —վորի վորոնումն ու հավասառումը ապագայում կլինի բնագիտության խնդիրը, —տիեզերական տարածության մեջ ճառագայթված ջերմությունը կփոխարիվի շարժման մի այլ ձևի, վորի մեջ նա վերսախն կարող է համակենտրոնանալ ու վերսախն գործել: Դրանով հենց վերացվում է այն գլխավոր գժվարությունը, վոր կանգնած եր մահացած արեգակների նորից հրաշեկ մշուշագանգված դառնալու դեմ:

Ի միջի այլոց, աշխարհների մշտնջենակես կրկնվող հաջորդականությունն անսահման ժամանակի մեջ միայն տրամարանական լրացումն և անթիվ աշխարհների միաժամանակ համագոյության անսահման տարածության մեջ, —մի թեղ, վորի անհրաժեշտությունն ստիպված եր ընդունել յանկի Դրեպերի¹ հակաթեորեաթիկ ուղեղն անդամ:

Ահա! այն մշտնջենական ըրջապտույտը, վորի մեջ շարժվում ե մատերիան, մի շրջապտույտ, վորն ալարտում ե իր տրաեկտորիան միայն այնպիսի ժամանակամիջոցներում, վորոնց համար մեր յերկրային տարին անկարող ե ծառայել վորպես չափման բավարար միավոր, մի շրջապտույտ, վորի մեջ ամենաբարձր զարգացման ժամանակը, որգանական կյանքի ժամանակը, ևս առավել իրենց և ընդության գիտակցությունն ունեցող եյակների կյանքի ժամանակը նույնքան նեղ ե, վորքան և այն տարածությունը, վորի սահմաններում գոյություն են ունենում կյանքն ու ինքնագիտակցությունը, մի շրջապտույտ, վորի մեջ մատերիայի ամեն վերջնական գոյածն—լինի դա արեգակ, թե մշուշագանգված, առանձին կենդանի, թե կենդանական տեսակ, քերմիական միացություն, թե տարրալուծում—հավասարապես անցողիկ են, վորի մեջ չկա վոչինչ հավերժական, քան հավերժ վոփփոխվող, հավերժ շարժվող մատերիան ու այն որենքները, վորոնցով շարժվում ու փոփոխվում ե այն: Սակայն վորքան ել հաճախ ու անողոք տեղի ունենա այս ըրջապտույտը ժամանակի ու տարածության մեջ, վորքան ել միլիոնավոր արեգակներ ու յեր-

¹ «Բազմաթիվ տիեզերքների գոյությունն անսահման տարածության մեջ ժեղ տանում և զետի տիեզերքների հաջորդական հերթափոխությունն անսահման ժամանակի մեջ» (Դրեպեր, Յեղոռպայի մտավոր զարդացման պատմությունը, II, էջ 325): (Մանոքագրություն Ենթելի):

կըրներ ծագեն ու վոչնչանան, վորքան ել յերկար տեսի մինչև վորեւ մեկ արեգակնային համակարգություն և միայն մեկ մոլորակի վրա որդանական կյանքի համար պայմաններ ստեղծվեն. վորքան ել անթիվ որդանական եյակները նախ առաջանան ու չքանան, մինչև վոր նրանց միջից զարդանան մտածելու ընդունակ ուղեղ ունեցող կենդանիներ և կարճատես ժամանակով իրենց կյանքի համար բարենպատ պայմաններ գտնեն, վորպեսզի այնուհետեւ անողորմ կերպով նորից բնաջնջվեն, —մենք այնուամենայնիվ հավաստի յենք, վոր մատերիան իր բոլոր կերպարանափոխումներով հանդերձ հավերժ նույնն ե մնում, վոր նրա առորիուտներից և վոչ մեկը չի կարող կորսարի մատնվել, և վոր այդ պատճառով նույն յերկաթյա անհրաժեշտությամբ ել, վորով նա յերկրի վրա պետք ե վոչնչացնի իր գերահրաշ ծաղկելը՝ մտածող վոդին, —նա պարտավոր կլինի սրան մի այլ տեղ և այլ ժամանակ վերստին ծնունդ տալու:

Գ Ի Ա Լ ԵԿ Տ Ի Կ Ա .¹

(Զարդացնել գիտական կազմությունների
գիտության, ընդհանուր բնույթը՝ ի հակադրություն
մետաֆիլիկայի) :

Այսպիսով, բնության և մարդկային հասարակության պատ-
մություններն են, վոր արտօրակցիա յեն արվում գիտական կազմության
որենքները: Նրանք հենց վոչ այլ ինչ են, քան յեթե պատմական
զարդացման այս յերկու փուլերի, ինչպես և իր իսկ մտածու-
թյան առավել ընդհանրական որենքները: Նրանք ըստ եյության
հանգում են հետեւյալ յերեք որենքներին.

Որենք քանակը վորակի վերածվելու և ընդհակառակը.
Հակադրությունների փոխադարձ ներթափանցման որենք.
Բացասման բացասման որենք:

Այս բոլոր յերեք որենքները Հեղելը զարդացրել ե իրեն հա-
տուկ իդեալիստական յեղանակով, վորպես լոկ մտածության
որենքներ՝ առաջինը «Ծրամաբանության» առաջին մասում՝ դոյլի
ուսմունքի մեջ, յերկրորդը դրավում ե նրա «Ծրամաբանության»

¹ Անշետի ձևուարում այս հոգվածի ասանձին եջերի վրա վերելից լու-
սանցքներում գրված ե «Դիալեկտիկական որենքներ»: Բնության գիտէկու-
կայի նախկին հրատարակություններում գա արվում եր «Դիալեկտիկակայի,
վրանք գիտության, ընդհանուր բնույթը» խորագոյն (գա գերմանական
տեքստի փակազմերի մեջ առած այն արտահայտության առաջին հինգ բառերն
են, վորով սկսվում ե այս հոգվածը): Վերջինս զրկած ե, Հավանաբար,
1879թ. (այսանդ ցիտատ ե բերվում Խոսկո-Շորեների «Քիմիայի» 2-րդ հա-
տորից, վոր լույս ե տեսել 1879թ., բայց վաշինչ չի առվում սկանդիոնի
հայտագործման վերաբերմաք, վորի մասին ննդելու չեր կարող չի հատա-
կել զալլումը հայտադրման կապակցությամբ, յեթև այս հոգվածը դրած
լիներ 1879թ., սկանդիոնի հայտագործման թվից, հետո:—լսմք:

ամբողջ յերկրորդ և առավել զգալի մասը՝ ուսմունքն եյության
մասին, վերջապես յերրորդը հանդես ե գալիս վորպես հիմնական
որենք բովանդակ սիստեմը կառուցելիս: Սխալն այն ե, վոր այս
որենքները նա չի հանում բնությունից և պատմությունից, այլ
վերջններիս վզին ե փաթաթում վորպես մտածության որենք-
ներ: Այսանդից ել այնուհետեւ բղխում ե ամբողջ բոնազբոսիկ ու
հաճախ զարդութելի կառուցվածքը՝ աշխարհը—կամա թե ակա-
մա—պետք ե հարժարլի տրամաբանության այն սիստեմին, վորն
ինքը մարդկային մտածության զարդացման վորոշ աստիճանի
արդյունք ե միայն: Յեթե մենք այդ հարաբերությունը չուռ-
առնք, այն ժամանակ ամեն ինչ պարզ կդառնա, և իդեալիստա-
կան փիլիսոփայության մեջ խիստ խորհրդագոր թվացող դիա-
լեկտիկական որենքներն իսկույն կդառնան բոլորովին արևի լույ-
սի պես պարզ ու պայծառ:

Սակայն ով փոքր ի շատեւ ծանոթ ե Հեղելին, նա կիմանա,
վոր Հեղելը հարյուրավոր տեղերում գիտական կական որենքները
հաստատող ծայր աստիճան դիմուկ որինակներ ե բերում բնու-
թյունից ու պատմությունից:

Մենք գիտականիկայի ձեռնարկ չենք ուզում այստեղ դրել,
այլ կամենում ենք միայն ցույց տալ, վոր գիտականիկական
որենքները բնության զարդացման իրական որենքներ են և, հե-
տեւաբար, ուժ ունեն նաև թեորետիկ բնագիտության համար:
Ուստի և մենք չենք կարող այս որենքների միջև դոյլություն
ունեցող ներքին կազի խորհրդական մանրամասն քննարկել:

1. Որենք՝ քանակը վորակի վերածվելու և ընդհակառակիը:
Մեր նպատակների համար կարող ենք այս արտահայտել այսպես—
մեջ գորակական փոփոխությունները—ամեն մի մաս-
բնության մեջ գորակական փոփոխությունների կամ ձեռների
նակի դեպքի համար ճշգրիտ սահմանված յեղանակով—կարող են
տեղի ունենալ մատերիալի կամ շարժման (այսպես կոչված՝
եներգիայի) քանակական համերժան կամ քանակական նվազման
միջոցով միայն:

Բոլոր վորակական տարբերությունները բնության մեջ
հիմնվում են կամ տարբեր քիմիական բաղադրության վրա, կամ
շարժման (եներգիայի) տարբեր քանակությունների կամ ձևերի
վրա, կամ—վոր դեպքի միջաւ տեղի ունի—յերկուուի վրա ել:
Այսպիսով, անկարելի յե փոփոխել վորեւ մարմնի վորակն առանց
մատերիալի կամ շարժման համերժան կամ նվազման, այսինքն՝
առանց այդ մարմնինը քանակապես փոփոխելու: Այս ձեռնով հե-

գելան խորհուրդավոր թեզը դառնում է, Հետևապես, վոչ միտյն լիակատար ուցիոնալ, այլև ըստ առնենայնի ակներե:

Հազիվ թե անհրաժեշտ լինի, մատնանշել, վոր մարմինների այլուրոպիկ և աղբեզատ տարբեր վիճակներն ել, վորոնք կախում ունեն մոլեկուլների տարբեր խմբավորումից, հենցում են մարմնին հաղորդված շարժման մեծ կամ վորքը քանակության վրա:

Հասլա ի՞նչ առենք շարժման կամ այսպես կոչված եներդիայի ձևափոխության մասին: Զե՞ վոր յերբ մենք ջերմությունը փոխարկում ենք մեխանիկական շարժման կամ ընդհակառակը, ապա այսուղի վրակիը փոխվում է, իսկ քանակը մնում է նույնը: Այդ ճիշտ է, ասկայն շարժման ձևափոխության մասին կարելի յի ասել այն, ինչ Հայնեն ասում է մոլության մասին՝ առաջինի կարող ել լինել ամեն մեկն ըստինքյան, իսկ մոլության համար միշտ յերկուսն են հարկավոր¹: Շարժման ձևափոխությունը միշտ այնպիսի պրոցես է, վոր տեղի յե ունենում առնվազն յերկու մարմինների միջև, վորոնցից մեկը այս-ինչ վրակի շարժման վորոց քանակություն (որինակ, ջերմություն) ե կորցնում, իսկ մյուսը այն-ինչ այլ վրակի շարժման համապատասխան քանակություն ե ասանում (մեխանիկական շարժում, ելեկտրականություն, քիմիական տարրալուծում): Հետևաբար, քանակն ու փորակն այսուղի փոխադարձաբար ե յերկողմանիորեն են իրար համապատասխանում: Մինչեւ այժմ գեռ յերեք չի հաջողվել առանձին մեկուսացած մարմնի ներսում շարժումը մի ձեից վերածել մի այլ ձեի:

Խոսքն այսուղի առայժմ անկենդան մարմինների մասին է: Նույն այս որենքն ուժի մեջ ենաւ կենդանի մարմինների համար, սակայն կենդանի մարմինների մեջ դա յերեան ե գալիս խիստ խճճված պայմաններում, և գեռ այսոր ել այսուղի հաճախ մեղ համար գեռ անհնարին ե քանակական չափումը:

Եթե պատկերացնենք, վոր վորեե անկենդան մարմին միշտ ավելի փոքր մասերի յե բաժանվում, ապա սկզբում վոչ մի վորակական փոփոխություն չի առաջանա: Սակայն այս բաժանումն ունի իր սահմանը: յեթե մեզ հաջողվի, ինչպես գոլորշիացման դեղքում, ապա վիճակում ստանալ առնենձին մոլեկուլներ, ապա

¹ Ենթելու նկատի ունի Հայնեի նախարանը «Սալոնի» յերթորդ մասին, վոր գրքած է 1837 թվին և «Մասնիչի մասին» վերնադիրն ե կրում (տես Հայնեի Հայնե, Բնութիր յերկեր, եջ 301, Մ.—Լ., 1934 թ.): — Խմբ.:

թեև մենք կարող ենք մեծ մասամբ չարունակել այդ մոլեկուլները բաժանել, սակայն միայն՝ վորակն ել լիովին փոխելով: Մոլեկուլը կազմալուծվում ե իր առանձին առողմներին, վորոնք միանդամայն այլ հատկություններ ունեն, քան նա: Յեթե մենք տարբեր քիմիական տարրերից բաղադրված մոլեկուլների հետ գործ ունենք, ապա բաղադրյալ մոլեկուլի տեղը յերեան են գալիս նույն այդ տարբերի առողմները կամ մոլեկուլները. իսկ յեթե գործ ունենք տարրական մոլեկուլների հետ, ապա հանդիսավոր մոլեկուլի տեղը յերեան են գալիս այդ տարբերի առողմները կամ մոլեկուլները. իսկ

Սակայն մոլեկուլն ել արդեն իր հերթին վորակալեա տարբեր ե այն Փիղիկական մասսայից, վորին պատկանում ե նա: Նա կարող ե այդ Փիղիկական մասսայից անկախ շարժումներ կատարել նաև այն ժամանակ, յերբ այդ մասսան հանդիսում ե թվում: Մոլեկուլը կարող ե, որինակ, ջերմության տատանումներ կատարել, նա կարող ե հարկան մոլեկուլների նկատմամբ դիրքը կամ կապը փոխելու չնորհիվ մարմինն այլ ալլոտրոպիկ կամ աղբեկանային դրսության փոխանցել ե այլն:

Այսպիսով տեսնում ենք, վոր բաժանման դուրս քանակական գործողությունն ունի մի սահման, վորտեղից նա վերածվում ե վորակական տարրերության՝ մասսան բաղկացած ե միայն մոլեկուլներից, սակայն նա եյալես տարբեր և մոլեկուլից, ինչպես սա—իր հերթին—տարբեր և առողմից: Հենց այս տարրերության վրա յե հիմնված, վոր բաժանում են մեխանիկան՝ վորպես յերկրացին ու յերկնային մասսաների գիտություն, Փիղիկայից՝ վորպես մոլեկուլների մեխանիկայից և քիմիայից՝ վորպես առողմների Փիղիկայից:

Մեխանիկայի մեջ վոչ մի վրակի չենք հանդիպում, այլ բարակույն գեպքում՝ վիճակի, ինչպես՝ հավասարակառություն, շարժում, պատենցիալ եներգիա, վորոնք բոլորն ել հիմնվում են շարժման չափելի փոփոխման վրա և քանակական արտահայտելի յեն: Վորչափ, ուրեմն, այսուղի տեղի վորպես համապատասխան փոփոխություն, դա պայմանավորվում ե համապատասխան քանակական փոփոխությամբ:

Ֆիղիկայի մեջ մարմինները դիտվում են վորպես քիմիապես անփոփոխ կամ ինդիֆերենտ. այսուղի մենք զործ ունենք նրանց

մոլեկուլային վիճակների փոփոխության և շարժման այն ձևափոխության հետ, վրաի ժամանակ ըստը գեպքերում—դոնե յերկու կողմերից մեկի մոտ—զործի յեն ընկնում մոլեկուլները։ Այստեղ յուրաքանչյուր փոփոխություն քանակի փոխանցումն և վորակի—մարմնին հաղորդած վորես ձևի շարժման քանակի քանակական փոփոխության հետևանքը։ «Այսպէս, որինակ, ջրի ջերմաստիճանն սկզբում վոչ մի նշանակություն չունի նրա կաթիլահեղուկային վիճակի համար, բայց հեղուկ ջրի ջերմաստիճանն ավելացնելիս կամ պակասեցնելիս հասնում և մի մոմենտ, յերբ հարակցության այդ վիճակը փոխվում է, և ջուրը մեկ դեպքում դառնում և չողի, մյուսում՝ սառուց» (Hegel, Enzyklopädie, Gesamtausgabe, Band VI, S. 217)¹։ Այսպես, անհրաժեշտ և հոսանքի ուժի վորոշ մինիմում, վորակնորդ պլատինե լարն սկսի լույս տալ այսպես, յուրաքանչյուր մետաղ ունի ձուլման իր ջերմությունը. այսպես, ամեն մի հեղուկ, տվյալ հնչման պայմաններում, ունի սառուցման և յեռման՝ իր վորոշ կետը—վորքանով մենք ի վիճակի յենք մեր ունեցած միջոցներով համապատասխան ջերմաստիճան ստանալու. այսպես, վերջապես, ամեն մի գաղունի կրիտիկական կետ, վորին համելով համապատասխան ձնշումով ու ցրտացումով կարելի յե այն վերածել հեղուկ վիճակի։ Մեկ խոսքով, Փիզիկայի այսպես կոչված կոնստանտները մեծ մասամբ վոչ այլ ինչ են, բայց յեթե հանդուցակետերի անուն, հանդուցակետեր, վորտեղ շարժման քանակական (փոփոխությունը) ավելացումը կամ նվազեցումը առաջ ե բերում համապատասխան մարմինների վիճակի վորակական փոփոխություն,—վորտեղ, հետեւքար, քանակը փոխարկվում և վորակի։

Սակայն Հեղելի հայտարերած բնության որենքն իր մեծագույն հաղթանակներն ե տոնում քիմիայի բնագավառում։ Քիմիան կարելի յե անվանել մարմինների վորակական փոփոխությունների գիտություն,—իտիփոխություններ, վորոնք տեղի յեն ունենում քանակական կազմի փոփոխության պղեցության տակ։ Այս արդեն ինքը՝ Հեղելը դիտեր (Logik, Gesamtausgabe, III,

¹ Հեղել, Եցիկլոպեդիա, Յերկերի լիակատար ժողովածու, 4. VI, էջ 217։ Հեղելի յերկերի գերմաներն ժողովածուի VI հատորի վերաբերմաբ 1-ին (Բեռլին 1840) և յերկրորդ (Բեռլին 1843) տեքստը և եղերի համարակալությունը միանդամայն զուգագիպում են։ Ենդեւն ըստ յերկութիւն ցիտատ ե բերում 2-րդ հրատարակությունից։ Խուսերն հրատարակության մեջ (Гегель, Сочинения, том I, Энциклопедия философских наук, часть первая: Логика. М.—Л. 1929) այս հատվածը գտնվում է 186-րդ էջի վրա։—Խմբ։

S. 433)¹։ Վերցնենք թթվածինը. յեթե վորակես մոլեկուլ այսոնք միանում են յերեք ատոմ և վոչ թե յերկու, ինչպես սովորաբար լինում ե, ատոմ մեր ատջև մենք ունենք ողոնը, մի մարմին, վորեի հոտով ու ներդրությամբ վորոշակի տարբերվում և սովորական թթվածինց։ Իսկ ի՞նչ առել այն տարբեր պլուպորցիաների մասին, վորոնցի թթվածինը միանում և ազոտի կամ ծծումբի հետ մասին, վորոնցի թթվածինը միանում և ազոտի կամ ծծումբի հետ մասին վորոնցի յուրաքանչյուրը տալիս ե բոլոր մյուս մարմիններից և վորոնցի յուրաքանչյուրը տարբեր մի մարմին։ Վորքա՞ն տարբեր և զմարթավակապես տարբեր մի մարմին։ Վորքա՞ն տարբեր և զմարթավակապի ապոմ-մոնոքսիդ N₂O ապոտաթթվական անհիդրիտից (ազոտ պենտօքսիդ N₂O₅)։ Առաջինը գաղ ե, յերկրորդը՝ սովորական բարեխառնության մեջ՝ պինդ, բյուրեղ մարմին։ Այնինչ սրանց ամբողջ տարբերությունն ըստ բաղադրության այն ե, վոր յերկրորդը հինդ անդամ ավելի թթվածին և պարունակում իր մեջ, քան առաջինը և յերկուսի ել միջև գտնվում են ազոտի այլ թթվուներ (NO, N₂O₃, N₂O₅), վորոնք բոլորն ել վորակապես տարբեր են այդ յերկուսից և իրարից։

Դա ե՛լ ավելի ցայտուն հանդես ե գալիս ածխածնային միացությունների հօմոլոգ շարքերում, առանձնապես պարզ ածխածինների զմարդում։ Նորմալ պարաֆիններից ամենազարգը մեթանն ե, CH₄. Այստեղ ածխածնի ատոմի ինամակցության 4 միավորներ հագեցած են ջրածնի 4 ատոմով։ Յերկրորդ պարաֆինի, եթանի մեջ՝ C₂H₆, ածխածնի յերկու ատոմ կազմած են իրար հետ, իսկ ինամակցության 6 ազատ միավոր հագեցած են ջրածնի 6 ատոմով։ Այսպես ել շարունակվում ե, C₃H₈, C₄H₁₀ և այլն 6 ատոմով։ Այսպես ել շարունակվում ե, C_nH_{n+2} փորմուլով՝ այնպիս վոր ամեն անգամ ավելացնելով CH₂ խումբը, ստացվում և նախորդից վորակապես տարբեր մի մարմին։ Այս շարքի ստորագույն յերեք անգամները դաշտեր են, մեզ ծանոթ բարձրագույնը՝ Հեղեղադեկան C₁₆H₃₄, մի պինդ մարմին ե, վոր ունի 270 աստիճան յեռման կետ C₁₆H₃₄։ Վերաբերում է պարաֆիններից առաջած (թեորիապես) սկզբնական ալիկոնիների շարքին C_nH_{n+1}O փորմուլով և միարմատ ճարպային թթուներին (Փորմուլը C_nH_nO₂)։ Թե ինչ վորակական տարբերություն կարող ե առաջ բերել C_nH_n-ի քանակական հավելումը, այդ կարելի յե իմանալ

¹ Հեղելի յերկերի գերմաներն ժողովածուի III հատորի Եները Ենգելը ցույց ե տալիս ըստ 2-րդ հրատարակության (Բեռլին 1841 թ.)։ Բուռերն հրատարակության մեջ (Гегель, Сочинения, том V: Наука логики. М. 1937) այս հատվածը գտնվում է 433-րդ էջի վրա։—Խմբ։

Հործի հիման վրա. բավական եւ C_2H_6O գինու սպիրտը ճաշակելի վարեն ձևով՝ առանց այլ ալկոհոլի խառնուրդի՝ խմենք, իսկ մեկ այլ անդամ նույն գինու ալկոհոլն ընդունենք, սակայն, ամելի սպիրտի $C_6H_{12}O$ փոքր խառնուրդով, վորը զղվելի սիլվուսային յուղի գլխավոր բավակացուցիչ մասն ե։ Մեր գլուխը հետեւյալ առավու այդ կղզա, այն եւ՝ ի վնաս իրեն. այնպես, վոր կարելի յեւ մինչեւ անդամ ասել, վոր հարբածությունն ու նրան հաջորդող դլիացավը նույնպես վորակի փոխարկված քանակ ե՝ մի կողմից դիմու սպիրտի, մյուս կողմից նրան ավելացրած C_3H_6 -ի։

Այս շարքերում հեղելյան որենքն ի միջի այլոց մի այլ ձևով ել եւ ներկայանում մեզ։ Շարքի ստորին անդամները ատոմների միջիայն մեկ փոխադարձ դասավորություն են թույլ տալիս։ Բայց յեթե մի մոլեկուլի մեջ միավորվող ատոմների թիվը հասնում եւ ամեն մի շարքի համար վորոշյալ մեծության, ապա ատոմների խմբավորումը մոլեկուլի մեջ կարող եւ տեղի ունենալ միքանի յեղանակով։ Կարող են յերեան գալ յերկու կամ միքանի իզոմեր մարմիններ, վորոնք մոլեկուլի մեջ ունեն նույն թվով C , H , O ատոմներ, սակայն այնուամենային վորակով տարբեր են իրարից։ Նույնիսկ կարող ենք հաշվել, թե շարքի յուրաքանչյուր անդամի համար վորքան այսպիսի իզոմերներ են հնարավոր։ Այսպես՝ պարաֆինների շարքում C_4H_{10} -ի համար՝ յերկու իզոմերներ դոյլություն ունեն, C_5H_{12} -ի համար՝ յերեք. բարձր անդամների համար հնարավոր իզոմերների թիվն աճում է շատ արագ։ Այսպիսով, գարձյալ ատոմների քանակությունն ե մոլեկուլի մեջ, վոր պայմանավորում ե վորակապես տարբեր իզոմերմինների հնարավորությունը ե, վորքան այդ ապացուցված ե, իրական դոյլությունը։

Դեռ ավելին։ Այս շարքերից մեզ ծանոթ ամեն մի մարմնի անալոգիայով մենք կարող ենք յեղակացություններ հանել այդպիսի շարքի տակալին մեզ անծանոթ անդամների Փիզիկական հատկությունների մասին և բավականաչափ վստահությամբ կանխատեսել այդ հատկությունները—դոնե շարքի մեջ մեզ ծանոթ անդամներին հաջորդողների նկատմամբ, որինակ յեռման կետը և այլն։

Վերջապես, Հեղելի որենքն արժեք ունի վո՛չ միայն բարդ մարմինների, այլև քիմիական տարբերի համար։ Մենք գլխական այժմ, «վոր տարբերի քիմիական հատկություններն ատոմական կշիռների պարբերական Փունկցիան են», (Roscoe-Schorlemmer,

Ausführliches Lehrbuch der Chemie, II Band, S. 823)¹, վոր հետեւ վապես նրանց վորակը պայմանավորված ե նրանց ատոմական կշռի քանակով։ Դա հաջողվեց փայլուն կերպով հաստատել։ Մենք կելեյելն ապացուցեց, վոր ըստ ատոմական կշռի դասավորված համապետի տարբերի չարգում կան զանազան բացեր, վորոնք յենթադրել են տալիս, թե այստեղ տակալին նոր տարբեր պետք ե հայտագործվեն։ Նա առաջուց նկարագրեց այդ անծանոթ տարբերից մեկի, —վորը նա անվանեց եկամլյուսին, վորովհետեւ ալյումինով սկսվող շարքում նա անմիջապես հաջորդում ե ալյումինին, —ընդհանուր քիմիական հատկանիւները և մոտավորապես կանխորոշեց նրա տեսակարար ու ատոմային կշիռը, ինչպես և նրա ատոմական ծավալը։ Միքանի տարի անց լեկոկ-դե-բուտուրդրանը (Lecoq de Boisbaudran) հայտագործեց իրավես այս տարբերը, և Մենդելեյևի կանխորոշումներն արդարացան աննշան շեղումներով։ Եկամլյուսինի իրացալ գալիփումի մեջ (նույն տեղում, եջ 828)։ Մենդելեյևին անդիտակցորեն կիրառելով քանակը վորակի վերածվելու հեղելյան որենքը, կատարեց գիտական մի խոշոր գործ։ Վորը կարելի յեւ համարձակապես դասել լեմերյեի հայտագործման կողքին, վորը հաշվեց և գտավ տակավին անհայտ մոլորակի՝ նեպատունի ուղին։

Նույն այդ որենքը հաստավում է ամեն քայլափոխում բիուլոգիայի, ինչպես և մարդկային հասարակության պատմության մեջ, բայց մենք սահմանափակվում ենք ճշգրիտ գիտություններից վերցրած որինակներով, վորովհետեւ այստեղ կարելի յեւ հայտագործման սպառություն լինել։

Համանարար այն պարնաները, վորոնք ցարդ անվանարկել են քանակի վերածումը վորակի, վորպես միտիկականություն և անհամանալի տրանսցենդենտալիզմ, այժմ հՀայտարարեն, թե անհամանալի հատկանալի, սովորական ու տափակ բան ե, վոր վաղուց ի վեր կիրառում եյին իրենք, և վոր գրանով նոր բան չեն ասում նրանց։ Սակայն բնության, հասարակության ու մտքի զարգացման ընդհանուր որենքն իր հանրարժեք ձևով առաջին անդամ արտահայտելը՝ կմնա ընդմիջած համաշխարհային պատմական նշանակություն ունեցող մի խոչը գործ։ Յեվ յեթե այս պարոնները տարիներ ի վեր թույլ են տվել քանակը և վորակը

¹ Առաջի և Շարլեմեր, Քիմիայի մանրամասն դասագիրք, Հ. Ա. — Խմբ. :

մեկը մյուսին վերածելու, առանց խմանալու, թե ի՞նչ են անում,
ապա նրանք պետք ե միտիթարգիւն Մոլյերի պարսն ժուրդենի¹
հետ միասին, վորը նույնպես իր ամբողջ կյանքի ընթացքում
պրոզայով ե խօսել՝ առանց յերբեւ գլխի ընկնելու այդ մասին²:

ԱՆՌԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Բեր, Կ. (1792—1876) — գերմանացի բիոլոգ: — 18:
Բրուն, Գ. (1548—1600) — վերանության շրջանի խալուցի փելիսովա, վորը
պայքարել ե կաթոլիկ յեկեղեցու դեմ: Խնկվեցիան այրեց նրան խարուց-
կի վրա: — 9:
Գյորե, Վ. (1749—1832) — գերմանացի մեծ բանաստեղծ: — 24:
Գրավ, Վ. (1811—1896) — անգլիացի Փիդիկոս և փառարան: — 16:
Դալտոն, Գ. (1766—1844) — անգլիացի Փիդիկոս և քիմիկոս: — 16:
Դարվին, Զ. (1809—1882) — հոչակավոր անգլիացի բիոլոգ, որդումական աշ-
խարհի ծառման և զարգացման արդի ռումունիք (գարվինիզմ): Հիմնադր-
բը: — 18, 24:
Դեկարտ, Ռ. (1596—1650) — հայտնի ֆրանսացի փելիսոփա, մաթեմատիկոս
և Փիդիկոս: — Բուրժուական կլսուկ փիլիսոփայության նախահայրերից
մեկը: — 10, 16:
Գյուրիք, Ա. (1471—1528) — գերմանացի նկարիչ: — 8:
Գրեարի, Գ. (1811—1882) — ամերիկացի բնախույզ և պատժարան: — 28:
Եվլինիս, (մոտ 330—275 մինչ և դ.) — հին Հունաստանի մեծ մաթեմա-
տիկոս: — 10:
Լամարկ, Ժ. (1744—1829) — ֆրանսացի բնախույզ, Գարվինի նախորդը: — 18:
Լապլաս, Պ. (1749—1827) — ֆրանսացի մաթեմատիկոս և տառապետ: —
13, 14, 20:
Լավուազյե, Ա. (1743—1794) — հոչակավոր ֆրանսացի քիմիկոս: — 10:
Լեկոլ-դե-Բուարուբան, Պ. (1838—1912) — ֆրանսացի քիմիկոս: — 37:
Լեյբնից, Գ. (1646—1716) — ականավոր գիտնական և իդեալիստ փելիսո-
փա: — 10:
Լեննարդ դա-Վինչի (1452—1519) — վերանության շրջանի խալուցի հանճարեղ
զարծիչ, բանասեղծ, նկարիչ, բնախույզ, փիլիսոփա: — 8:
Լեվերյե, Ժ. (1811—1877) — ֆրանսացի աստղագետ: Նրա կատարած հաշ-
կագում 1846 թվին հայտապնդվեց Նեկուան մուլուկը: — 37:
Լիննի, Կ. (1707—1778) — շվեյցարցի բնախույզ: — 10, 11:
Լայել, Զ. (1797—1875) — անգլիացի յերկարական: — 15:
Լուրիք, Մ. (1483—1546) — անգլիացի գիտակ և բազուքականության (Լու-
րիքի) գերականության հիմնադիրը Գերմանիայում: — 8:
Վալվին, Ժ. (1509—1564) — ֆրանսական բողոքականության հիմնադիրը: — 9:

¹ «Քաղջենին ազնվականության մէջ» կոմեդիայում: — Խմբ. :

² Զետագրում սրան հաջորդում ե մի եջ, ուր քաղվածքներ են բերված
Հեգելի «Տրամաբանություն» աշխատության «վոչնչի» և «բացասման» մասին
բաժիններից, այնուհետև՝ յերեք եջ, ուր զետեղված են չարժման որենքների
ֆորմուլների հաշիվներ: — Խմբ. :

- Կոնտ, ի. (1724—1804) — հռչակավոր փիլիսոփա և գիտնական, գեղմանական։
 Հլասիկ իդեալիզմի նախահայրը : — 13, 14, 17։
 Կեպլեր, ի. (1571—1630) — գերմանացի մեծ աստղագետ : — 10։
 Կյուվիե, Ժ. (1769—1832) — հռչակավոր բրանտացի բնախույզ : — 15։
 Կապերիկան, Ն. (1473—1543) — մեծ աստղագետ, առաջնա անդամ գիտականութեան հիմնադրել է, թե մոլորակները պատվում են արեգակի շառավղ : — 12։
 Հայն, Հ. (1797—1856) — գերմանացի մեծ բանաստեղծ : — 32։
 Հեղին, Գ. (1770—1831) — գերմանացի մեծ իդեալիստ փիլիսոփա : — 13, 30, 31, 34, 35։
 Հեկել, Ե. (1834—1919) — գերմանացի ականավոր մատերիալիստ բիոլոգ : — 6, 21։
 Հերցի, Վ. (1788—1822) — անդլիացի աստղագետ, ծագմամբ գերմանացի : — 14։
 Մարշակ, Ռ. (1814—1878) — գերմանացի բնախույզ, վոր հայտադրութել և ենթադրացի պահպանման և փոխանցման սրբնքը : — 16։
 Մաքիավելի, Ն. (1469—1527) — իտալացի քաղաքական գործիչ և գրող : — 8։
 Մեդեկ, Ի. (1794—1874) — գերմանացի աստղագետ : — 13, 19, 26։
 Մենեկեյել, Ի. (1834—1907) — ռուս մեծ քիմիկոս, քիմիական տարրերի պարհական աղյուսակի հեղինակ : — 37։
 Մյորյուս, Կ. Ա. (1825—1908) — գերմանացի կենդանաբան : — 21։
 Մոլյե, Ժ. Բ. (1622—1673) — ֆրանսացի մեծ թատերագիր : — 38։
 Մոնտալտիեր, Մ. Ռ. (1714—1800) — ֆրանսացի զինվորական ինժեներ : — 8։
 Նեպիր, Գ. (1550—1617) — չուալանդացի մաթեմատիկոս : — 10։
 Նյուտոն, Ի. (1643—1727) — անգլիացի հռչակավոր Փիզիկոս և մաթեմատիկոս : — 10, 12, 14։
 Շարլումեր, Կ. (1834—1892) — ականավոր քիմիկոս, Մարքսի և Ենդելի բարեկամը : — 30, 36։
 Ռիեն, Լ. (1779—1851) — գերմանացի բնախույզ և փիլիսոփա : — 18։
 Չոլոմենս, (ժող. 150 ն. դ.) — հին հռչական մաթեմատիկոս և աստղագետ : — 10։
 Չուալանդացի գույք : — 10։
 Չուալանդացի գույք : — 16։
 Շուլիկ, Գ. (1833—1915) — անգլիացի քիմիկոս : — 30, 36։
 Սիկի, Ա. (1818—1878) — իտալացի աստղագետ : — 19, 25, 26։
 Սւե-Սիմոն, Ա. (1760—1825) — ֆրանսացի սոցիալիստ ուսուութեան : — 13։
 Սերվիտ, Մ. (մոտ 1511—1553) — իտալանացի բժիշկ, վոր մեծ գյուտեր և արել արգան շրջանառության բնադրավառութեան հարույկի հանվեց, վորպես հերետիկոս : — 9։
 Սովինար, Բ. (1632—1677) — հռչանդացի հայտնի մատերիալիստ - փիլիսոփա : — 13։
 Վոլփ, Խ. (1679—1754) — գերմանացի իդեալիստ փիլիսոփա : — 12։
 Վոլփ, Կ. (1733—1794) — գերմանացի անատոմ և ֆիզիոլոգ : — 18։
 Տարիչելի, Յ. (1608—1647) — իտալացի Փիզիկոս : — 10։

Պարքային-կնդիլսի-լենինի ինստիտուտից	6
Ներառություններ	30
Պիկարդիական	29
Մասնակցություն	

Թարգմ. Հ. Մանուկյան
Հայերեն թարգմ. Խմբագիր Բ. Ն. Դավթյան
Տէխն. խմբ. Ա. Խաչատրյան
Սըրբագրիչ Հ. Գևորգյան
Կոնսորտ սըրբագրիչ Լ. Արուկյան

Գլավլիտի լիազոր № Ն. 2890 հրատ. № 732,
Պատմեր № 187, տիրագ. 10 000

Թղթի չափը $60 \times 92^{\frac{1}{16}}$ (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուռում) $2^{\frac{1}{2}}$ տպ. մամուռ 1¹/₂ թերթ թուղթ.

Համալուս) ՀՀ տպ. սահման Դաթութիւնը բարեկարգ է անձնված և արտադրության 11/IX 1939 թ.

Ստորագրվել ե տպագրելու 3/X 1939 թ.
Զեհան 49 հ.

Պատմաբան Գրականության հրատարակչության
տպարտն, Երևան, Ալահվերդյան № 65

ԳԻՐԸ 40 Կ.

Ф. ЭНГЕЛЬС

ИЗ «ДИАЛЕКТИКИ ПРИРОДЫ»

ВВЕДЕНИЕ. ДИАЛЕКТИКА

Армгиз—Издательство полит. литературы

Երևան, 1939

ՀՀ Ազգային գրադարան



NL0174493

